Յոթ տարի լույսի պես երկիրն ասպատակեցին, գիտությունն ու կրթությունը ոչնչացրին: Կռիվ, պատերազմ, զոհեր, խեղվածներ: Թքած ունեն քոչվորներն ամեն ինչի վրա: Գիր ես ստեղծել, եկեղեցի կառուցել, դպրոց, համալսարան, բանակ, պատմություն գրել, վերջապես: Քոչվորին այդ ամենը ոչինչ չի ասում: Նրանցը թալանն է, ավերելը:

Կարդացեք՝ էջ 5

Եկեղեցու թուլացումն ինքնաբերաբար չի ստեղծի նոր ինքնություն: Եթե վերացնենք պատմականորեն հաստատված հոգեւոր հավասարակշռությունը, ապա վերականգնման հնար այլեւս չի լինի: Մի՞թե իշխանության մեջ չեն մնացել մարդիկ, ովքեր ունակ են հասկանալու, որ հոգեւոր-մշակութային ժառանգությանն օտար է խուժանի խեւությունը:

Կարդացեք՝ էջ 7



Պարոն նախագահ, մոռացե՞լ եք Ձեր նշած 23 հայ քրիստոնյաների եւ Փաշինյանին ուղղված Ձեր խնդրանք-հորդորի մասին, թե՞ միայն արյունահեղությունը կստիպի Ձեզ՝ հիշել Երեւանի եւ Բաքվի բանտերում խոշտանգվող, հալածվող հայ քրիստոնյաների մասին… մի՞թե պետք է նիգերիացի քրիստոնյա լինենք, որ Ձեզ մտահոգի մեր ճակատագիրը:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 179 (4081), 11 նոյեմբեր, երեքշաբթի, 2025

www.hraparak.am

Չնայած հանրության որոշ շրջանակներ քննադատեցին Սերժ Սարգսյանին՝ 7 ժամանոց հարցազրույցում ասված ու չասված որոշ մտքերի համար, մանավանդ՝ նրա, որ չասաց, թե ինչու 2018-ին այդքան հեշտ զիջեց իշխանությունը Փաշինյանին, սակայն ՀՀԿ-ում կարծում են, որ նա ասել է ամեն ինչ: Իսկ գլխավոր ասելիքն այն էր, որ ցրվեն բոլոր կասկածները, թե իշխանափոխության, հետեւաբար՝ Արցախի կորստի հարցում դերակատարը Ռուսաստանն էր: Որ հասկացվի՝ «հզոր» ուժեր են աշխատել՝ ի դեմս Արեւմուտքի եւ ԱՄՆ-ի: Իսկ ամենակարեւորը, որ Սարգսյանը պատմել է, թե Փաշինյանն իշխանափոխության օրերին ՀՀ-ում ԵՄ դեսպան Սվիտալսկուն ասել է, որ իրեն առաջարկել են փոխվարչապետի պաշտոն, եթե փողոցը հանդարտեցնի, բայց ինքը մերժել է առաջարկը: Սարգսյանն ասել է, որ ինքը նման առաջարկ չի արել, եւ չի բացահայտել, թե ով է արել, բայց բոլորը հասկացան, որ առաջարկն արվել է նախկին վարչապետ Կարեն Կարապետյանի կողմից: Սարգսյանն ասել է նաեւ. «Հարց կարող է առաջանալ՝ ինչո՞ւ էր ՌԴ-ն ձեռնպահ մնում. որովհետեւ նրանք համարում էին, որ բոլոր՝ նույնիսկ ժողովրդական ընդվզման պարագայում, եթե ես թողնեմ պաշտոնը, ապա այդ պաշտոնին լինելու է ռուսամետ գործիչ՝ ի դեմս վարչապետ Կարեն Կարապետյանի, եւ դա մեծ ողբերգություն չէ: Ողբերգություն կլինի, եթե Հայաստանում հակառուսական մեծ տրամադրություններ առաջանան»:

Թվում էր, թե Վաշինգտոնում Ադրբեջանը Փաշինյանին քարտ բլանշ տվեց, որ խաղաղության կեղծ քարոզով 2026-ին վերարտադրվի, հետո կատարի իր պահանջները, սակայն ՔՊ-ում խոսում են, որ անգամ Բաքվում են սկսել կասկածել նրա վերընտրվելուն, ուստի ուզում են հնարավորինս շուտ ստանալ իրենց ուզածը: Ադրբեջանի ԱԳՆ-ն հայտարարեց, որ «4 անկլավների վերադարձի հարցն իր ուշադրության կենտրոնում է»: Փաշինյանն արձագանքեց. «Սահմանազատման արդյունքում պետք է վերադարձնենք Արծվաշենը եւ մյուս օկուպացված ինքնիշխան տարածքները»: Իրականում, սա Տիգրանաշենը զիջելու անոնս է, որ վտանգ կառաջանա, որ Վայոց ձորն ու Սյունիքը մի օր կարող են կտրել Հայաստանից: Իսկ Արծվաշենի վերադարձը ոչինչ չի տալու, քանի որ այն հնարավոր չէ բնակեցնել: Փաշինյանը, իհարկե, խոստացել էր այդ գործարքն անել 26-ի ընտրություններից հետո, քանի որ հասկանում է, որ Տիգրանաշենը հանձնելուց հետո վերարտադրվելու իր շանսերը զրոյանալու են, սակայն եթե Բաքվում երկու ոտքը մեկ մաշիկի մեջ դնեն, հնարավոր է՝ իշխանությունը հապճեպ արտահերթ ընտրությունների գնա:

Երբ էին խաբում

Վերջին 5 տարիներին մենք՝ լրագրողներս, պարբերաբար փորձել ենք պարզել, թե մեր բանակն ինչ վիճակում է, արդյո՞ք միլիարդների հասնող զենքի ու զինտեխնիկայի կորուստն այս ընթացքում լրացվել է՝ կարողանո՞ւմ են զենք գնել դրսից կամ արտադրել Հայաստանում: Արդյո՞ք մարդուժի կորուստները լրացված են, արդյո՞ք մեր երկրի սահմանները բավարար պաշտպանված են, ի՞նչ պայմաններում են ծառայում մեր զինվորները (Ազատ գյուղի ողբերգությունից հետո դա առավել ակտուալ դարձավ): Բայց պաշտպանության նախարարությունն այս տարիներին անառիկ բերդի է վերածվել, որի հիմնական թշնամին լրագրողն է, եւ որից որեւէ տեղեկատվություն ստանալն անհնարին է: Անգամ քանիցս գրել ենք, որ խելացի իշխանությունն իր գնած զենքը, մեկին տասը բազմապատկած, կներկայացներ եւ իր բանակի հզորությունն էլ պարբերաբար ի ցույց կդներ, որ թշնամին չհամարձակվեր թերագնահատել մեզ, եւ մտքով չանցներ ոտնձգությունների գնալ սահմանին: Բայց դե՝ այս իշխանությունն ի՞նչն է ճիշտ անում, որ դա ճիշտ անի: Ճիշտ հակառակը՝ շարունակ ներշնչում են, որ մենք թույլ ենք, բանակ չունենք, զենք չունենք, որպեսզի պատերազմից սարսափահար ժողովուրդը համաձայնի բոլոր զիջումներին, միայն թե մեզ վրա չհարձակվեն, քանի որ մեզ ներշնչել են, որ դրա արդյունքում անպայման կպարտվենք: Բայց պարզվեց, որ այս հարցում էլ են մեզ խաբել: Հենց Սերժ Սարգսյանը խոսեց բանակի մասին, Նիկոլ Փաշինյանը սկսեց զինվոր-ռոբոտների նկարներ դնել եւ հրավիրել 50 հոգանոց խմբերի՝ բանակում էքսկուրսիայի: Իսկ սահմանադրությունը գրող, ՆԳՆ-ն բարեփոխող Դանիել Իոաննիսյանն էլ իր էջում թվարկեց այն հզոր սպառազինությունը, որն այս տարիներին ձեռք է բերվել: Հարց է ծագում՝ իսկ ինչո՞ւ էիք հասարակությունից թաքցնում այդ ամենը եւ ինչո՞ւ եք հիմա բացահայտում:

Օհանավանցիներից մեկը պատմեց, որ կիրակի օրը Ստեփան Ասատրյանը (Տեր Արամ) Հովհաննավանքում կրկին «պատարագ» է մատուցել, սակայն՝ «ինքն իր համար»՝ դատարկ վանքում: Նախորդ 2 շաբաթներին Փաշինյանի վարչական ռեսուրսի շնորհիվ մի քանի հարյուր մարդ էր մասնակցում, այս շաբաթ այդքանն էլ չի եղել: Օհանավանի վարչական ղեկավար Էդգար Հայրապետյանը մեզ ասաց, որ ինքը չի մասնակցել պատարագին եւ տեղյակ չէ, թե քանի մարդ է մասնակցել: Իսկ ի՞նչ կարծիքի եք Ասատրյանի մասին, ճի՞շտ է անում, որ իր տեղը չի զիջում օրինական քահանաներին: «Անկեղծ ասած՝ ես դուրս եմ էդ թեմաներից: Եկեք՝ իմ կարծիքը ես չասեմ, նա համայնքում ընդունված հոգեւորական է, մնացած ոչ մի բան չգիտեմ: Եթե չհարգեն, նրա պատարագներին չեն գնա, եթե գնում են, ուրեմն հարգում են»:

ՔՊ քարոզարշավ՝ բյուջեի հաշվին

Ալեն Սիմոնյանն իրեն եւ իր աշխատակազմից 6 հոգու նոյեմբերի 7-8-ը գործուղել էր Սյունիքի մարզ: Պաշտոնական կարգադրությունում ասվում է, որ Հայաստանի հարավ են գործուղվել աշխատանքային այցով, իհարկե, այցից հետո հաշվետվություն չի ներկայացրել, որպեսզի պարզ դառնա, թե ինչ հանդիպումներ է ունեցել, սակայն Սիմոնյանը, կարելի է ասել, գրեթե օնլայն լուսաբանում էր իր ողջ այցը, եւ պարզ դարձավ, որ եղել է Կապան, Գորիս, Քաջարան համայնքներում: Ի դեպ, Գորիսի եւ Քաջարանի երբեմնի ընդդիմադիր համայնքապետերն են դիմավորել նրան, շրջել է փողոցներում, անգամ տաքսի է վարել, հանդիպել է տեղի կուսակցականների հետ: Նրանից առաջ էլ բյուջեի հաշվին մի խումբ պատգամավորներ էին մեկնել Տավուշի, Արարատի մարզեր: Ակնհայտ է, որ բյուջեի հաշվին ՔՊ-ականները կուսակցական քարոզարշավ են իրականացնում, քանի որ առաջիկայում ՔՊ նախընտրական ցուցակները կազմելու ժամանակ եւս ընտրիչները պետք է որոշեն ցուցակի կազմը՝ առաջադրված ՔՊ-ականներից: Այդուհանդերձ, ՔՊ-ում ասում են, որ Ալեն Սիմոնյանը, հավանաբար, հետեւություններ է արել ՔՊ վարչության ընտրություններից եւ բյուջեից վճարվող գործուղման է մեկնել, որ աշխատանքային այցի անվան տակ քարոզարշավ իրականացնի ՔՊ-ականների շրջանում, որ նախընտրական ցուցակը ձեւավորելու քվեարկության ժամանակ կրկին չհայտնվի հետին հորիզոնականներում: Վարչության ընտրությունների ժամանակ նա 11-րդն էր եւ դա բացատրում էր նրանով, որ քարոզարշավ չի արել: Ցուցակի տեղերով է որոշվելու նաեւ ապագա իշխանությունում պաշտոնների հարցը, եթե, իհարկե, ՔՊ-ն վերարտադրվի: Ի դեպ, վերջին օրերին ԱԺ պատգամավորի թեկնածու առաջադրվողների կտրուկ աճ է գրանցվել: Ասացին, որ երեկվա դրությամբ մոտ 100 առաջադրում է եղել:

ՀԱՅԹՅՈՒՂ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՌԱՑՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԸ ԿՎԵՐԱԴԱՌՆԱ

Օրերս գրել էինք, որ Վաղարշապատի նախընտրական քարոզարշավի ժամանակ ընդդիմադիր ուժերի կազմակերպած հավաքին մասնակցելու պատճառով աշխատանքից ազատվել է Հայթաղ գյուղի դպրոցի տնօրենի պաշտոնակատար Վարդան Ասատրյանը: Երեկ տեղեկացանք, որ նա վերադառնում է դպրոց, բայց ոչ թե ժամանակավոր պաշտոնակատարի կարգավիճակով, այլ՝ ուսումնական գծով փոխտնօրենի:

Մաթեմատիկայի 73-ամյա ուսուցիչը, որը 50 տարուց ավելի դպրոցում է աշխատում, չէր պատկերացրել, որ իրենց գյուղում քարոզարշավ իրականացնող ընդդիմադիր կուսակցությունից մեկի հավաքին ակամա մասնակից լինելու պատճառով կարող է հեռացվել պաշտոնից: Հայթաղի դպրոցում ասացին՝ շաբաթ օր է եղել, ինքն էլ խանութ է գնացել՝ տնային հողաթափերով, դուրս է եկել ու հանդիպել քարոզարշավ անող խմբին, կանգնել է ու լսել: «Նույնիսկ ոչ աշխատանքային օրով է մասնակցել քարոզարշավին, ինչ է՝ չի՞ կարելի: Բա ծրագրերին ո՞նց ծանոթանա, ո՞նց կողմնորոշվի: Մտավորական մարդ է, սրանրա ասածով ու ուղղորդմամբ չի առաջնորդվում: Պետք է լսի, կշռադատի, որ ճիշտ ընտրություն կատարի»,- քննարկում են դպրոցում:

Թե ով է Ասատրյանին նկարել ու տեսագրությունն ուղարկել Արմավիրի մարզպետին, դպրոցում չեն ասում: Ասատրյանն ինքն էլ է անակնկալի եկել, երբ մարզպետարանից կանչել, ցույց են տվել տեսագրությունն ու ասել, թե աշխատանքային օրերին զբաղվում է քարոզչությամբ: Տեսագրության հիման վրա էլ տնօրենի ԺՊ-ի լիազորությունները դադարեցրել են, թեեւ տեղի ունեցածը բացարձակ ապօրինություն է:

Վաստակաշատ ուսուցչի նկատմամբ անարդար վերաբերմունքը զայրացրել է դպրոցի ողջ աշխատակազմին: Ուսուցիչների խումբը հավաքվել՝ գնացել է մարզպետարան, հանդիպել մարզպետ Խաչատրյանի հետ, ինչից հետո որոշում է կայացվել՝ Վարդան Ասատրյանին ուղարկել արձակուրդ, իսկ վերադարձից հետո վերականգնել ուսումնական գծով փոխտնօրենի պաշտոնում: Վարդան Ասատրյանը դպրոցի փոխտնօրեն է եղել նախկին տնօրեն Ռուզաննա Գաբրիելյանի պաշտոնանկությունից առաջ: Այն օրվանից, ինչ Գաբրիելյանն ազատվել է պաշտոնից, ու տնօրենի ԺՊ է նշանակվել մաթեմատիկայի ուսուցիչը, դպրոցում կրքերը մարել են, խարդավանքները՝ պակասել: Ուսուցիչները դա վերագրում են Ասատրյանի հավասարակշռված ու պրոֆեսիոնալ աշխատանքին: Հենց նրա մանկավարժական անբասիր նկարագիրն էլ, թերեւս, վախեցրել է Արմավիրի մարզպետին, եւ նա ոչ միայն հեռացման մտքից է հրաժարվել, այլեւ խոսք անգամ չի ասել քաղաքական դրդապատճառի մասին:

Տարեց ուսուցչին սթրեսի ենթարկելուց հետո նրան կրկին կվերադարձնեն դպրոց: Իսկ դպրոցի տնօրենի պաշտոնակատարի «սուրբ տեղը» դատարկ չի մնացել՝ Ասատրյանի գնալուց երկու-երեք օր հետո այդ պաշտոնին է նշանակվել տնօրենի հավակնություններով ու հավաստագրով՝ Փարաքարի դպրոցից գործուղված ուսուցչուհին: «Փաստորեն, այս թատրոնը նոր տնօրենի համար էր: Թող այդպես էլ ասեին, ոչ թե խեղճ Ասատրյանի գլխին սարքեին, թե քարոզարշավի է մասնակցել»,- ասացին դպրոցում:

ՀԳ. *Այն, որ «իրական» Հայաստանում ազատ խոսքը կաղապարվում, այլախոհները՝ բանտարկվում, հանիրավի պաշտոնանկություններն էլ հաճախադեպ են դառնում, արդեն զարմանալի չէ: Զարմանալի է արժանապատիվ հայի տեսակի անհետացումը. հասնող, օգնող, կարեկցողի տեսակից «գործ տվողի» տեսակին սահուն անցումը: Սիրո կեղծ խոստումներով իշխանության եկած ՔՊ-ն կարողացավ չարի սերմերից «ստուկաչներ» բուծել, որոնք հանուն մի հացափոր վերաբերմունքի «փուռն են տալիս» նույնիսկ բարեկամին, ընկերոջը, հարեւանին:*

Արեգ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՇՊԱՐԳԱԼԿԱ Է ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼ ՈՒ ԲՌՆՎԵԼ

Արդարադատության նախարարության «Իրավական կրթության եւ վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ում նախորդ ամիս մի մեծ միջադեպ է տեղի ունեցել: Մեզ պատմեցին, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցները հերթական անգամ այդ ՊՈԱԿ-ում հոկտեմբերի կեսերին մասնակցել են դասընթացների եւ վերջում ստուգարք հանձնել, որից առաջ էլ միջադեպը տեղի է ունեցել: Հարկադիրի աշխատակիցներից մեկը, որը մասնակցել է այդ դասընթացներին, ՊՈԱԿ-ի ներսում մարդ է ունեցել, խնդրել է՝ ստուգարքի ժամանակ թաքուն վերցնել՝ գողանալ թեստային առաջադրանքների հարցուպատասխանները, փոխանցել իրեն, որպեսզի կարողանա դրանց միջոցով ստանալ ստուգարքը: ՊՈԱԿ-ի այդ աշխատակիցը հանցավոր համաձայնության է գնացել՝ գողանալով եւ փորձելով իր հետ դուրս բերել պատասխանները: Եվ երբ թղթապանակը թեւի տակ դուրս գալուց է եղել, ՊՈԱԿ-ի մեկ այլ աշխատակից «բռնել է գողին», որից հետո մեծ վիճաբանություն է ծագել, եւ բանը հասել է քաշքշուկի: Ուշագրավն այն է, որ նախարարությունն այս միջադեպով չի զբաղվել, չեն էլ պատժել թեստերի գողին, մինչդեռ գողին բռնողը (Տաթեւիկ անունով) միջադեպից հետո ազատման դիմում է գրել եւ հեռացել ՊՈԱԿ-ից:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից հետաքրքրվեցինք՝ ո՞րը են վերջին անգամ նման դասընթաց կազմակերպել: Մեզ ուղարկեցին իրենց կայքում հրապարակված տեղեկատվության հղումը, որտեղ մասնավորապես նշված է. «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցները հոկտեմբերի 13-17-ը մասնակցել են արդարադատության նախարարության «Իրավական կրթության եւ վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հանրային ծառայողների համար կազմակերպված հատուկ ուսուցման դասընթացներին: Հրազեն եւ օրենքով նախատեսված հատուկ միջոցներ կրելու, պահելու եւ գործադրելու ամենամյա հատուկ ուսուցման դասընթացներին մասնակցել է Ծառայության 35 աշխատակից: Նրանք ծանոթացել են հրազենի եւ հատուկ միջոցների գործադրման պայմաններին, վարժաձեւերին, հրազենային եւ այլ վնասվածքներ ստացած անձանց առաջին բուժօգնություն ցույց տալու հմտություններին, արտակարգ պայմաններում արդյունավետ հաղորդակցման, ինչպես նաեւ՝ սթրեսի եւ ժամանակի կառավարման հմտություններին: Աշխատակիցները մասնակցել են նաեւ հրաձգության գործնական դասընթացներին: Դասընթացի ավարտին Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հանրային ծառայողները հանձնել են ստուգարք՝ թեստավորման եւ կրակային պատրաստվածության ստուգման միջոցով»:

Իսկ թե ովքեր են կտրվել թեստային ստուգարքից, ասացին, որ չեն կարող անուններ տալ, դա անձնական տվյալ է: Արդարադատության նախարարությունից հետաքրքրվեցինք՝ վերջերս նման միջադեպ եղե՞լ է, Տաթեւիկ անունով աշխատակից՝ իր դիմումով հեռացե՞լ է: Ասացին, որ «բազմաթիվ Տաթեւիկներ» կան նախարարությունում, մնացած ինֆորմացիայի մասով էլ չարձագանքեցին:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Փաշինյանի քավոր մարզպետը երկրորդում է վարչապետ սանիկին

Հոկտեմբերի 31-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը, պատասխանելով Հայաստանի վերահսկողության տակ գտնվող, Ադրբեջանին պատկանող հողերի մասին իշխանավորների արած հայտարարությունների առնչությամբ լրագրողների հարցերին, ասել է. «Ժողովուրդ ջան, դա լրիվ պարզ է երեւում է, էդտեղ տհենց մեծ գաղտնիք չկա, դուք լավ գիտեք, որ Ոսկեպարի հատվածում, Բերքաբերի հատվածում նման տարածքներ ունենք»:

Նոյեմբերի 5-ին տեղեկատվական հարցում եմ ուղարկել մարզպետ Ղալումյանին. «Հոկտեմբերի 31-ին Դուք, պատասխանելով Հայաստանի վերահսկողության տակ գտնվող, Ադրբեջանին պատկանող հողերի մասին լրագրողների հարցերին, ասել եք, որ մեծ գաղտնիք չկա, լրագրողները լավ գիտեն, որ Ոսկեպարի, Բերքաբերի հատվածներում նման տարածքներ ունենք: Ոսկեպարում եւ Բերքաբերում ի՞նչ տարածքներ են դրանք, ինչքա՞ն մակերեսով, Ձեր կարծիքով, Տավուշի մարզից այժմ Ադրբեջանի վերահսկողության տակ քանի՞ հեկտար տարածք կա»:

Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Հոկտեմբերի 31-ին Ձեր նշած ճեպազրույցի ընթացքում մարզպետ Հայկ Ղալումյանն արդեն հանրայնացրել է հարցի վերաբերյալ իր իմացած տեղեկատվությունը: Մնացյալ տվյալների ճշտման նպատակով առաջարկում ենք դիմել համապատասխան լիազոր մարմնին»: Իսկ ո՞րն է, ըստ մարզպետ Հ. Ղալումյանի, այդ հարցի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն տնօրինող «համապատասխան լիազոր մարմինը»:

Մարզպետը եւ մարզպետարանը, ըստ էության, չեն պատասխանել իմ հարցին, թե դրանք ինչ տարածքներ են: Վերջապես, մարզպետն ինչո՞ւ է հիմա հանրայնացնում այդ թեման: Ինձ թվում է՝ դա սերտորեն կապված է նրա հետ, որ Ադրբեջանի արտգործնախարարության խոսնակ Այխան Հաջիզադեն APA գործակալությանը տված հարցազրույցում հայտարարել էր, թե ադրբեջանական չորս անկլավների վերադարձը գտնվում է իրենց մշտական ուշադրության կենտրոնում. «Ղազախի շրջանի երեք գյուղերի եւ Նախիջեւանի Քարքի գյուղի վերադարձն Ադրբեջանին միշտ էլ գերակա խնդիր է»: Եվ հավելել էր, որ այդ հարցը պետք է լուծվի սահմանազատման հանձնաժողովների շրջանակում: Նիկոլ Փաշինյանն էլ Ֆեյսբուքում գրել է. «Սահմանազատման արդյունքում մենք պետք է վերադարձնենք Արծվաշենը եւ ՀՀ մյուս օկուպացված ինքնիշխան տարածքները»: Բոլորն անմիջապես հասկացան, որ Նիկոլ Փաշինյանի այդ գրառումն իրականում սահմանազատման արդյունքում Արծվաշենը ետ բերելու մասին չէ, այլ՝ Ադրբեջանի պահանջները կատարելու, դա սահմանազատման անվան տակ 4 անկլավների հանձնման անոնս է: Իսկ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, ամուսնության քավոր, մարզպետ Հայկ Ղալումյանն իր ճեպազրույցում հենց այդ հանձնման անոնսն է արել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆԿԼԱՎ

ՆՈՐ ՏԱՐԱԾՔ ԵՆ ՀԱՆՁՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Ներժ Սարգսյանի ծավալուն հարցազրույցի ավարտից մեկ ժամ անց Նիկոլ Փաշինյանը սկսեց ստատուսներ գրել: Մեկ տասնյակից ավելի գրառումներից ուշագրավը Արծվաշենի մասին գրածն էր. «Սահմանազատման արդյունքում մենք պետք է վերադարձնենք Արծվաշենը եւ մյուս օկուպացված ինքնիշխան տարածքները»: «Արծվաշենը հետ բերելու» խրոխտ կարգախոսի տակ իրականում նոր ստատեգիական տարածքներ հանձնելու, Հայաստանը ծվատելու ծրագիր է թաքնված: Արծվաշենի աշխարհագրական դիրքը եւ այն, որ դա անկլավ է Ադրբեջանի ներսում՝ անգամ վերադարձնելու դեպքում հայերն այնտեղ չեն բնակվելու: Պարզ է, որ դրա դիմաց Փաշինյանը կատարելու է Ադրբեջանի հերթական պահանջը՝ հանձնելով Տիգրանաշենը, Հայաստան-Իրան միջպետական ճանապարհի մի հատված, Ազատամուտից, Ոսկեպարից հատվածներ, Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհից տարածքներ: Արծվաշենի վերաբերյալ նման հայտարարություններով Փաշինյանը փորձում է պարզապես մոլորեցնել հանրությանը՝ Ադրբեջանին նոր զիջումներ անելու համար: Իհարկե, Արծվաշենն իր տարածքով հավասար է բոլոր վերը նշված անկլավային տարածքներին միասին վերցրած, բայց փոխանակման մասին էլ խոսք չկա, եւ ուղղակի միայն թղթի վրա է այն լինելու մերը:

Հիշեցնենք, որ անկլավէքսկլավների թեման սկսեց քննարկվել մոտ 2 տարի առաջ, մինչ այդ Փաշինյանն ու այլ իշխանավորներ վստահեցնում էին, որ ՀՀ տարածքում ադրբեջանական անկլավներ չկան, որ ոչ մի փաստաթղթում Հայաստանում ադրբեջանական անկլավների մասին վկայող իրավական հիմքեր չկան: Բայց հետո հանկարծ «հայտնաբերեցին» անկլավները, Ախ քարտուղար Արմեն Գրիգորյանն էլ հայտարարեց, որ երկու կողմում էլ կան անկլավներ, իսկ 2023 թ. մայիսի 14-ի բրյուսելյան հանդիպումից հետո Փաշինյանը հայտարարեց, որ Հայաստանի 29 հազար 800 քառակուսի կիլոմետրը չի ներառում անկլավները, ու շեշտեց, թե դա ընդամենը քաղաքական արձանագրում է, որի իրավական ձեւակերպումները դեռ պետք է տրվեն: Հետո խոսակցությունը գնաց այն հունով, որ Ադրբեջանն իր 8 անկլավների իրավական հիմքերը կներկայացնի, որից հետո քննարկում կսկսվի:

ԼՀԿ նախագահ, 2022 թ. մարտից մինչեւ 2024-ի փետրվարը վարչապետի հատուկ հանձնարարություններով դեսպան **Էդմոն Մարուքյանը** եւս համոզված է, որ իշխանությունը վերընտրվելուց հետո նոր տարածքներ է հանձնելու Ադրբեջանին, որը կանխելու միակ միջոցը Փաշինյանին իշխանազրկելն է: Նա շեշտում է, որ խոսքն այս անգամ ոչ թե Կիրանցի հողերի նմանվող տարածքների մասին է, այլ՝ ստարատեգիական տարածքների, ճանապարհների, դրանց նկատմամբ վերահսկողության: Եվ ուշադրություն է հրավիրում, որ օրեր առաջ Ադրբեջանի ԱԳՆ մամուլի խոսնակը մեզ «իրազեկեց», որ անկլավների հարցն արդեն սեղանի վրա է, ինչին հետեւեց վարչապետի պատասխանը՝ Արծվաշենը հետ բերելու մասին: «Արծվաշենի հետ բերելու օրակարգն իրականում ՀՀ-ից նոր տարածքներ հանձնելու օրակարգ է: Ինչո՞ւ, որովհետեւ Արծվաշենը բոլոր իրավական հիմքերով պատկանում է ՀՀ-ին, իսկ որ ՀՀ տարածքում անկլավներ կան՝ դրա իրավական հիմքերը չկան: Եվ ՀՀ ԱԳՆ-ն, վարչապետն այս ընթացքում ոչ մի տեղեկություն չեն տվել, որ Ադրբեջանն իրավական հիմքեր է ներկայացրել առ այն, որ ՀՀ տարածքում անկլավներ կան, որովհետեւ չկան նման հիմքեր»,- ասում է Մարուքյանը, հավելելով. «Ամենախնդրահարույցը Տիգրանաշենն է»: Հատուկ հանձնարարություններով դեսպան աշխատելիս ինքը զարմացել է՝ ինչպես է Փաշինյանը հրաժարվում հայամետ քարտեզներից եւ կանգ առնում 1970-ականների քարտեզի վրա, որն Ադրբեջանն իր ձեւով խմբագրել է: Ի սկզբանե կողմերը չէին կողմնորոշվում, թե որ քարտեզներն են սահմանազատման գործընթացի հիմք ընդունելու՝ 1920-ականների՞, թե՞ 1970-ականների: Փաշինյանի կարծիքն այն էր, որ պետք է ընդունել նրանք, որոնք իրավական հիմք ունեն, Ախ քարտուղարն էլ կոնկրետացրել էր, որ իրավական հիմք ունեցող միակ քարտեզները 20-ականներինն են, բայց հետո Փաշինյանը, չգիտես ինչու, նախընտրեց 1975 թ. քարտեզները, որոնք ներառում են Արցախն ու անկլավները. «Այդ ո՞նց է լինում, որ նախ հայտարարում են, թե իրավական հիմք ունեցողը 20-ականների քարտեզներն են, որոնցում Հայաստանը 31 հազար ք/կմ է, բայց հետո վարչապետը հայտարարում է, որ 75 թվականինն են ընտրում: Դեռ այն ժամանակ իրեն հարցնում եմ՝ բայց ինչո՞ւ այդ քարտեզները, եթե 20-ականների քարտեզում մեր տարածքն ավելի մեծ է, ոչ մի անկլավ չկա: Ասում է, որ կա Խորհրդային Միության հանրագիտարան, որտեղ կա 75 թ. քարտեզ, դրա հիման վրա ենք ճանաչում միմյանց տարածքները: Բայց հիշենք, որ Ադրբեջանը մինչ օրս չի ճանաչել: Մեր բախտը բերեց, որ Բաքուն մերժեց 1975 թ. քարտեզները. ես դեռ հրաժարական չէի տվել, ասի՝ լավ, գնամ Ազգային գրադարան, տեսնեմ՝ այդ ի՞նչ հանրագիտարան է: Նայում եմ հանրագիտարանը, որտեղ կան եւ 26 թ., եւ 30 թ. քարտեզներ, որտեղ ՀՀ-ն 31 հազար ք/կմ է: Ես, իհարկե, միամիտ չեմ, որ մտածեմ, թե կգնանք-կպահանջենք, նրանք էլ կտան 31 հազարը, բայց դա մեզ բանակցային խորք է տալիս, որ կբանակցենք ու կկանգնենք 29.800-ի վրա ու անկլավներ էլ չենք տա... սկզբում Շառլ Միշելի, մյուսների հետ հայտարարում էին 29.800-ի մասին, ավելի ուշ՝ 29.743-ի: Այդ ժամանակ շոկի մեջ էի, ասում էի՝ լավ, ո՞ր ղեկավարը մեզ լուրջ կվերաբերվի, եթե մենք օրը մի թիվ ենք ասում, հետո ՄԱԿ-ում է ելույթ ունենում, ասում է՝ Ադրբեջան, դու ինչ տարածքով ես ճանաչում մեր պետությունը: Ոնց որ մեկը գա, ինձ ասի՝ դու քանի՞ տարեկան ես, ես գիտեմ, որ 44 տարեկան եմ, բայց ասեմ. դու ասա՝ ես քանի տարեկան եմ, ու սկսեմ քննարկել... եթե դու թշնամուն ես հարցնում, ինչ ես ակնկալում, ինչ պետք է քեզ ասի, կասի՝ արի հեսա քեզ կասեմ, կասեմ՝ ո՞վ եք դուք վաբշե եղել.... Տավուշի սահմանազատման ժամանակ արդեն հրաժարականս տվել գնացել էի, 13 կմ սահմանազատեցին 1976 թ. ինչոր վերաբերելի քարտեզներով, բայց Սահմանադրական դատարանը հիմք չի պահանջում կառավարությունից, թե դու որ քարտեզով ես քո պետության տարածքը ճանաչում՝ տուր հիմքը դնենք»:

Մարուքյանը պնդում է, որ Հայաստանում ադրբեջանական անկլավներ չկան, եթե լինեին, Բաքուն հիմքեր կներկայացներ, բայց Փաշինյանն ուզում է Արծվաշենը ետ բերելու օրակարգի ներքո ռազմավարական տարածքներ հանձնել. «Իրենց միակ հիմքն այն է, որ Տիգրանաշենում 200 տարի ադրբեջանցիներ են ապրել, 2 հազար տարի էլ հայերն ապրել են Լեռնային Ղարաբաղում, հիմա կարմ՞նք ասենք, որ Արցախը հայկական անկլավ է»: Տիգրանաշենի հանձնումից հետո Փաշինյանն իրականություն է դարձնելու Ադրբեջանի մեկ այլ պահանջ՝ 300 հազար ադրբեջանցիների վերաբնակեցումը Հայաստանում: Ի դեպ, դեռ անցած տարի, ՔՊ փակ քննարկման ժամանակ, երբ Փաշինյանի թիմակիցները, այդ թվում՝ Սասուն Միքայելյանը, հիշեցրել են, որ Արծվաշենը մեկուսի է Հայաստանից՝ կարելի է փոխանակել Տիգրանաշենի հետ, Փաշինյանը թատրոն է բեմադրել, թե դուք ինձ մղում եք հանցագործության՝ ինչպե՞ս կարող եմ ՀՀ տարածք հանձնել Ադրբեջանին:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒ ԱԼԻԵՎԸ ՀԱՄԱՏԵՂ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ 2026 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Երվանդ Բոզոյանն** է:

- Իլհամ Ալիեւը սպառնալից հայտարարություններ է անում, իսկ Նիկոլ Փաշինյանն ու նրա ուսապարկերը հայտարարում են, որ աննախադեպ պատմական հաջողություն են արձանագրել՝ Ադրբեջանի տարածքով Հայաստան ցորեն է ներմուծվել: Ի՞նչ նախադեպ է սա, հայ ժողովուրդն այս առումով ունի՞ ուրախանալու առիթ:

- Ադրբեջանի տարածքով ցորենի ներմուծումը շարքային փիար քայլ է, որպեսզի համոզեն հայ հանրությանը, որ Զանգեզուրի միջանցքն ազերիների առաջ բացելով՝ Հայաստանի համար աննախադեպ ճանապարհներ, հնարավորություններ են բացվում: Այս ամենը նախընտրական քարոզարշավի ժեստ է՝ ի աջակցություն Նիկոլ Փաշինյանի, ինչը եւս մեկ անգամ փաստում է, որ Նիկոլ Փաշինյանն ու Իլհամ Ալիեւը համատեղ են պատրաստվում հայաստանյան 2026 թ. խորհրդարանի ընտրություններին: Նրանք փորձելու են հայ հանրությունից համատեղ քվե կորզել: Զուտ այս տրամաբանության մեջ է ցորենի պրոցեսը: Այդտեղ խորքային պատճառներ փնտրել հարկավոր չէ:

- Ներքաղաքական կյանքն էլ է ակտիվ փուլ մտել: Թեպետ ընտրություններին բավականին ժամանակ կա, սակայն ինչպես իշխող ՔՊ-ն, այնպես էլ ընդդիմությունը՝ նախկին նախագահների գլխավորությամբ, ակտիվացել են: Նախ Սերժ Սարգսյանը խոսեց, ապա՝ Ռոբերտ Քոչարյանը: Ինչի՞ մասին էին նրանց հայտարարությունները: Կա՞մ նորություն նրանց խոսքում:

- Որեւէ նորություն չկար, նոյեմբերի 9-ը առիթ էր նախկին նախագահների համար՝ արձանագրելու այն, ինչ գիտեն բոլորը: Նիկոլ Փաշինյանը Պրահայում լուծեց Արցախի հարցը, սակայն 2020 թվականի նոյեմբերի 9-ի միջոցով գոնե հնարավոր էր պահել Արցախի մի մասը, ինչպես նաեւ՝ Հայաստանը չէր հայտնվի այնպիսի ծանր վիճակի մեջ, ինչպես այսօր է հայտնվել՝ անվտանգության առումով: Այսօր Ադրբեջանից պաշտոնապես հնչում է, որ իրենց հաջորդ քայլը վերադարձն է «Արեւմտյան Ադրբեջան»: Արդեն որերորդ անգամ Ալիեւն այդ մասին է խոսում, իսկ դա նշանակում է, որ Բաքվի գլխավոր նպատակը հենց դա է, եւ մարդն անգամ չի թաքցնում իր դավադիր նպատակները: Նա հայ հասարակությանը սովորեցնում է, որ ադրբեջանցիների բնակեցումը Հայաստանում լինելու է անխուսափելի, ինչը հարվածում է Նիկոլ Փաշինյանին: Սակայն մյուս կողմից էլ ուզում է հանրությանը ցույց տալ, որ հայ հասարակությունը պետք է իրականության հետ առերեսվի: Նիկոլ Փաշինյանի կառավարման այս 7 տարիները հայ ժողովրդի եւ Հայաստանի պետականության համար թողեցին կատաստրոֆիկ հետեւանքներ: 2026-ից հետո, վստահաբար, այս իշխանությունն այլեւս չի լինելու, հասկանալի պատճառներով՝ Փաշինյանն այս իրավիճակից խիստ մտահոգված է եւ փորձում է անել ամեն ինչ, որպեսզի այս ամենի հետեւանքներից հնարավորինս խուսափի: Կալանավորումներ, ռեպրեսիաներ, ճնշումներ... բոլորն այդ մասին են վկայում: Աշխարհի բոլոր բռնապետերն անում են նման քայլեր, սակայն բոլորի վերջն էլ նույնն է լինում:

- Իսկ ինչո՞ւ եք վստահ, որ Փաշինյանը չի վերարտադրվի 2026-ին:

- Մեր հասարակությունն այս տարիներին տեսավ բոլոր այն «ձեռքբերումները», որոնց դառը պտուղներն այսօր բոլորս քաղում ենք՝ Արցախի կորստից ու զոհերից սկսած, վերջացրած անվտանգության հետ կապված, սոցիալական տարբեր խնդիրներով:

- Այսինքն՝ կարծում եք, որ եթե հանրությունը բավարար քանակի քվե չտա, նա հեշտությամբ կհեռանա՞:

- Ոչ մի բռնապետ էլ հեշտությամբ չի հեռանում: Ժողովրդավարությունը բռնապետերին այդքան հեշտությամբ չի կարող հաղթել: Պրոցեսը բավականին դժվար ու ծանր է, սակայն բոլորը պետք է հասկանան, որ դա միակ ճանապարհն է, որի շնորհիվ երկիրը կարող ենք ազատագրել այս սարսափելի վիճակից: Այլ տարբերակ չկա: Ընտրությունն այն տրիգերն է, որի արդյունքում կարող ենք դրական տենդենց ֆիքսել: Ամբողջ աշխարհում է այդպես: Նիկոլ Փաշինյանը հասկանում է, որ ծանր վիճակի մեջ է, դրա համար է խուճապի մատնվել:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՆՉՈ՞Ւ Է ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆ ԱՆՏԵՍՈՒՄ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ

*«Հրապարակի» զրուցակիցն Ալմելոյի (Նիդերլանդներ) քաղաքային խորհրդի անդամ, հայազգի գործիչ **Ռոբին Հայկ Գելիջին** է:*

- Ահազանգում եք, որ Հաագայում գործող ՀՀ դեսպանությունն ամիսներ շարունակ ձեր նամակներին չի արձագանքում, դեսպան Վիկտոր Բիյագովն էլ անտեսում է թե՛ ձեր եւ թե՛ նիդերլանդահայ մի շարք կազմակերպությունների մտահոգությունները: Ո՞րն է այդ իրավիճակի պատճառը:

- Խնդիրն անձնական չէ՝ այն կառուցվածքային եւ մշակութային բնույթ ունի: Արդեն մի քանի ամիս է՝ ես եւ Նիդերլանդներում գործող մի շարք հայկական կազմակերպություններ փորձում ենք դեսպանության հետ հաստատել բաց եւ արդյունավետ հաղորդակցություն: Ցավոք, արձագանք չենք ստացել. միայն լռություն: Խոսքը մեկ նամակի կամ հրավերի մասին չէ, այլ վերաբերմունքի՝ այն ձեւի, որով դեսպանությունը կապ է պահում համայնքի հետ: Ներկա դեսպանը, ցավոք, ընտրել է մեկուսացված ուղին՝ շփվելով միայն նեղ շրջանակի հետ եւ անտեսելով համայնքի լայն հատվածը, որը տարիներ շարունակ եղել է մեր սփյուռքի շարժիչ ուժը: Ես արդեն 12 տարի ծառայում եմ Ալմելո քաղաքի ավագանիում եւ համագործակցել եմ բազմաթիվ դիվանագետների հետ: Բայց այսպիսի փակ եւ անմատչելի դեսպան դեռ չեմ հանդիպել: Նախկին դեսպան Տիգրան Բալայանը բոլորի հետ շփվող, հարգալից, պետական մտածողությամբ մարդ էր: Այսօր, ցավոք, տեսնում ենք հակառակը՝ լռություն, հեռավորություն եւ երկխոսությունից վախ: Սա դիվանագիտություն չէ՝ սա խուսափում է: Նման վարքագիծը շատ ավելի վնասում է Հայաստանի հեղինակությանը, քան՝ որեւէ քննադատություն:

- Հայտարարել եք, որ «Հայաստանի նկատմամբ հավատարմությունը նշանակում է համարձակ խոսել անարդարության մասին»: Ի՞նչ անարդարության մասին է խոսքը, փակագծեր կբացե՞ք:

- Խոսքը քաղաքականության մասին չէ՝ խոսքը հարգանքի բացակայության մասին է: Անարդարությունն այն է, երբ տարիներ շարունակ համայնքին ծառայած հայերն անտեսվում են հենց այն մարդկանց կողմից, ովքեր պետք է ներկայացնեն նրանց: Հայաստանի հանդեպ հավատարմություն՝ չի նշանակում լռել: Դա նշանակում է ունենալ քաջություն՝ բարձրաձայնելու ոչ թե պետության դեմ, այլ՝ պետության օգտին: Երբ պաշտոնյաներն անտարբեր են կամ ինքնահավան են, թուլացնում են մեր միասնությունը: Ես արդեն 12 տարի ծառայել եմ հանրային ոլորտում եւ միշտ պաշտպանել եմ հայկական շահերը հպարտությամբ: Իմ խոսքը բխում է Հայաստանի հանդեպ սիրուց, ոչ թե՝ զայրույթից: Երբեմն այդ սերը պահանջում է ասել՝ սա ճիշտ չէ, եւ դա պետք է փոխվի:

- Ասում եք, որ Ձեր քննադատությունը վերաբերում է ոչ թե Հայաստանի Հանրապետությանը կամ կառավարությանը, այլ՝ դեսպանության թափանցիկության եւ հաղորդակցության պակասին:

- Այո, իմ քննադատությունը երբեք չի ուղղվել Հայաստանի կառավարության կամ պետության դեմ: Ես միշտ եղել եմ Հայաստանի կողքին՝ անկախ քաղաքական իշխանությունից: Իմ մտահոգությունը վերաբերում է բացառապես Հաագայում գտնվող ՀՀ դեսպանության աշխատանքին եւ հաղորդակցությանը: Դեսպանությունը ներկայացնում է Նիդերլանդներում ապրող բոլոր հայերին, ոչ թե մեկ միություն: Երբ այդ ներկայացուցչությունը դառնում է ընտրովի եւ փակ, դա բաժանում է ստեղծում եւ խաթարում է վստահությունը: Դիվանագիտությունը չի կարող լինել լռության եւ մեկուսացման վրա հիմնված: Յուրաքանչյուր սփյուռքահայ Հայաստանի եւ համայնքի միջեւ կամուրջ է: Ուստի իմ քննադատությունը կառավարության դեմ չէ, այլ՝ հարգանքի եւ հաշվետվողականության կոչ՝ դիվանագիտական կառույցին: Հայաստանը ներկայացնել՝ նշանակում է լսել հայերին:

- Ճի՞շտ եմ հասկանում, որ եթե առաջիկայում դեսպանության կողմից չլինի որեւէ նախաձեռնություն, մտադիր եք թեման ներկայացնել Նիդերլանդների խորհրդարանի պատգամավորներին եւ Եվրոպական խորհրդարանի այն անդամներին, որոնց հետ երկար տարիներ համագործակցել եք:

- Այո: Կդիմեմ եւ Նիդերլանդների խորհրդարան, եւ Եվրոպական խորհրդարան: Սա սպառնալիք չէ՝ սա պարտականություն է: Ավելի քան տասնամյակ ես համագործակցել եմ պատգամավորների եւ եվրախորհրդարանականների հետ՝ Հայաստանի անունը բարձր պահելու համար: Երբ տեսնում եմ, որ դիվանագետը վնասում է Հայաստանի հեղինակությանը, ես չեմ կարող լռել: Այնուամենայնիվ, ես դեռ հավատում եմ, որ երկխոսությունը հնարավոր է, եթե լինեն կամք եւ համարձակություն:

- Հայտարարել եք նաեւ, որ «միշտ եղել եք Հայաստանի կառավարության եւ մեր պետության կողքին, եւ դա երբեք չի փոխվի»: Իսկ ՀՀ իշխանությունների գործողություններում անարդարություն չե՞ք տեսնում. հարձակում Հայ եկեղեցու, հոգեւոր հայրերի, նրանց սատարող գործիչների, ընդդիմախոսների դեմ, զանգվածային կալանավորումներ եւ այլն:

- Ես միշտ կանգնած եմ եղել Հայաստանի պետության, այսինքն՝ ժողովրդի, հաստատությունների եւ ապագայի կողքին: Աջակցությունը չի նշանակում կույր համաձայնություն: Երբ ես խոսում եմ խնդիրների մասին, դա Հայաստանի թուլացման համար չէ, այլ՝ ամրապնդման: Ինչպես շատ սփյուռքահայեր, ես եւս մտահոգությամբ հետեւում եմ Հայաստանում տեղի ունեցողին: Կան բարդ եւ զգայուն հարցեր՝ պետություն-եկեղեցի հարաբերություններ, խոսքի ազատություն, այլակարծություն: Բայց դա Հայաստանի ներքին ժողովրդավարական գործընթացների խնդիր է: Իմ դերը դատելը չէ, այլ՝ աջակցելը եւ միավորելը: Կարեւոր է, որ յուրաքանչյուր կառավարություն հիշի՝ Հայաստանի ուժը գալիս է միասնությունից եւ հարգանքից՝ հավատքի, պատմության եւ ժողովրդի հանդեպ: Այսօրվա աշխարհաքաղաքական մարտահրավերների պայմաններում մենք առավել, քան երբեւէ, պետք է միավորող քաղաքականություն ունենանք:

- Հայաստան-Սփյուռք հարաբերությունները 2018-ից ի վեր ապրում են պատմության մեջ, թերեւս, ամենամեծ ճգնաժամը: Պաշտոնական Երեւանն անտեսում է Հայաստանի ճակատագրին վերաբերող ցավոտ հարցերի վերաբերյալ սփյուռքից հնչող առողջ քննադատությունը, կառուցողական առաջարկները: Ստացվում է, ՀՀ գործող վարչակազմի համար սփյուռքը միայն արտերկրյա «գործուղումների», «վոյաժների» համար «գեղեցիկ տեսարան է» եւ «ֆինանսական ակնկալության շտեմարան»:

- Այո, Հայաստան-Սփյուռք հարաբերությունները վերջին տարիներին թուլացել են, եւ դա ցավալի է երկու կողմերի համար: Բայց սա մեկ կառավարության կամ մեկ ժամանակաշրջանի խնդիր չէ, ավելի խորքային երեւույթ է՝ կապված սփյուռքի դերի ընկալման հետ: Սփյուռքը գեղեցիկ «ֆոն» չէ պետական այցերի ժամանակ կամ ֆինանսական աղբյուր: Սփյուռքը հայության մի մասն է՝ կենդանի ուժ, որը պահել է մեր ինքնությունը սերունդներով: Երբ Երեւանը հեռանում է այդ ուժից, կորցնում է իր ամենամեծ հարստություններից մեկը՝ իր նվիրված մարդկանց արտերկրում: Հայաստան-Սփյուռք կապերը չեն կարող կառուցվել միայն արարողություններով: Դա վստահության, շփման եւ փոխադարձ հարգանքի վրա հիմնված գործընթաց է: Երբ մենք վերականգնենք այդ կամուրջները, Հայաստանը կլինի ոչ թե ավելի թույլ, այլ՝ ավելի ուժեղ: Ես հավատում եմ, որ դա հնարավոր է ոչ թե ճնշման, այլ՝ հարգանքի եւ իրական համագործակցության միջոցով: Որովհետեւ Հայաստանի ապագան եւ սփյուռքի ուժն անբաժանելի են:

Արա ԱԼՈՅԱՆ

ՔՊ-ական Արգիշտի Մեխակյանը ցնցումների մեջ է

«Մայր Հայաստան» կուսակցության նախագահ Անդրանիկ Թեւանյանն օրեր առաջ հայտարարել էր, որ ԱԱԾ-ն պատրաստվում է քաղաքական հետապնդում իրականացնել Վաղարշապատի ավագանու արտահերթ ընտրություններում ավագանու «Մայր Հայաստանի» ցուցակը գլխավորող Գրիշա Հարությունյանի եւ ցուցակի երկրորդ համար Դավիթ Կարապետյանի նկատմամբ: Նրանք նախկինում այս համայնքի տարբեր բնակավայրերում ղեկավար պաշտոններ են զբաղեցրել:

Վաղարշապատի ավագանու արտահերթ ընտրություններում «Մայր Հայաստանի» շտաբի պետ **Գեւորգ Ստեփանյանը**, «Հրապարակ»-ի հետ զրույցում անդրադառնալով իրենց թեկնածուների դեմ տեղի ունեցող պրոցեսներին, ասաց. «Գրիշա Հարությունյանի եւ Դավիթ Կարապետյանի հանդեպ ինչ-որ պաշտոնական դիրքի, պաշտոնի չարաշահման հետ կապված՝ 10 տարի առաջվա բան է, այդ մարդիկ խոյ համայնքում հարգանք են վայելում: Այդպես, էլի, առաջադրվեցին, սկսվեց վախի դրսեւորում: Դեռ բան չկա, ամեն պահի կարող են կարգավիճակ տալ կամ կսպասեն, տեսնեն՝ ընտրությունների օրն ով ինչ քվե է ստացել: Ինչ ուզում է՝ թող անեն, ամսի 16-ին վաղարշապատցին իր ասելիքը կասի»: Ըստ Ստեփանյանի՝ խոշորացված համայնքում իշխանությունների կողմից վարչական ահռելի ռեսուրս է կիրառվում. ««Քաղաքացիական պայմանագրի» ՔՊ-ական Արգիշտի Մեխակյանն ընկել է ցնցումների մեջ, այսպիսի վարչական լծակ երբեք ոչ մի տեղ չի կիրառվել, անգամ Տիգրան Ավինյանը, որ 9 տոկոս ձայն էր հավաքել՝ այդքան վարչական լծակ կիրառելով մարդկանց բերում էր իր քարոզարշավին, էլի չկարողացավ: Մի քանի անգամ ավելի շատ է այստեղ: Էլ դպրոցի ուսուցիչներին տեսնում են «Մայր Հայաստանի» քարոզարշավին՝ գործից հանում են, էլ տնօրեն, էլ փոխտնօրեն, հաց են տալիս, մեկ է՝ օգուտ չի տալու, այսքան վախի մթնոլորտ երբեք չի եղել, ուղղակի մարդիկ վախենում են մեզ բարեւեն, ասում են՝ 1 ժամ հետո ձեր տեսանյութերը կնայեն, գործից կհանեն»:

- Խոյ համայնքում ինչքա՞ն է Արգիշտի Մեխակյանի ռեյտինգը:

- Իրենք գիտեն, որ Էջմիածին քաղաքում պարտված են, քանի որ 7 տարի նույն ՔՊ-ականն էր, նույն ՔՊ-ականին մյուսով փոխարինելով՝ տարբերություն չկա: Հիմա իրենք Խոյ խոշորացված համայնքը բերել են, միավորել են, որ այնտեղ Արգիշտի Մեխակյանը ձայներ հավաքի, բայց «Մայր Հայաստան» կուսակցությունն իրենց պլանները խառնել է: Խոյ խոշորացված համայնքում՝ մեր ամենօրյա շփումում քաղաքացիներն ասում են, որ շատ գոհ են մեր թեկնածուների աշխատանքից, այնտեղ երկար տարիներ նրանք աշխատել են:

- Չկարողանալով հաղթահարել շեմը, թերեւս, կոալիցիայի ճանապարհով կգնան....

- Իրենց քույր կուսակցությունը «Հանրապետությունն» է, իրենց ուշքնումիտքն այն է, որ անպայման «Հանրապետություն» կուսակցությունն անցնի, որպեսզի կարողանան կոալիցիա կազմել, բայց շտապեմ ասել, որ «Հանրապետությունն» անգամ շեմը չի կարող հաղթահարել: «Հանրապետություն» եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների միջեւ չկա առնչություն ոչ մի ձեւի: Ով իրական ընդդիմադիր է, մենք պատրաստ ենք համագործակցելու, իսկ ՔՊ-ին եւ «Հանրապետությանը» պետք է այնպես անել, որ քաղաքացիները քվե չտան:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԱՅՍ ԱՌԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՏ ՆՇԱՆ Է

Եկեք մի այսպիսի նախավարժանք կատարենք… Հապա ասեք՝ հայրենասեր Նիկոլ: Ասեցի՞ք: Իսկ հիմա նայեք ձեզ հայելու մեջ… Ժպտո՞ւմ եք, ձեր ծիծաղն էլ եկավ, չէ՞, ձեր ասածի վրա: Ինչքան փորձեք, այնքան ծիծաղելու եք, ինչքան արտաբերեք այդ բառակապակցությունը, «հայրենասիրություն» բառն այնքան նսեմանալու է ձեր աչքին: Ինչո՞ւ: Որովհետեւ չկա այդպիսի բան՝ հայրենասեր Նիկոլ: Անհայրենիքները, առհասարակ, հայրենասեր չեն լինում: Քոչվոր ցեղերը՝ ձեզ օրինակ: Չունեն հայրենիք, ասպատակում են իրենց յուրտերի շուրջ եղած տարածքներն ու երկրները, սպանում, ոչնչացնում ամբողջ ժողովուրդների, ազգերի, խլում նրանց հայրենիքը, ոչնչացնում մշակույթը, հավատալիքները, ամեն ինչ, որ հանդիպում է իրենց աստանդական կյանքի ճանապարհին:

Եթե Նիկոլին խնայում եք, կարող եք ասել՝ հայրենասեր դդում, հայրենասեր դդումի տեղակալ, հայրենասեր լամա, հայրենասեր խոզ, հայրենասեր եղջերու, շատ ներողություն՝ հայրենասեր պուպուլիկ… Հը, չի՞ կպնում, ծիծաղո՞ւմ եք: Յոթ տարի լույսի պես երկիրն ասպատակեցին, գիտությունն ու կրթությունը ոչնչացրին… Կռիվ, պատերազմ, զոհեր, խեղվածներ… Թքած ունեն քոչվորները քո ամեն ինչի վրա: Գիր ես ստեղծել, եկեղեցի կառուցել, դպրոց, համալսարան, բանակ, պատմություն ես գրել, վերջապես: Քոչվորին այդ ամենը ոչինչ չի ասում: Նրանցը թալանն է, ավերելը, ոչնչացնելը… Քոչվորի սերունդն էլ քոչվոր է՝ հոգեբանությամբ, բնույթով, վարքով: Չես փոխի, անհայրենիք սրիկաներ են, եւ՝ վերջ:

Գիտեմ, որ պարադոքսալ կինչի սրանց պարագայում, բայց պետք է ասեմ, որ նույնիսկ Նիկոլի եւ մյուս անհայրենիք սրիկաների վերջին հանգրվանը կա ու մնում է հայրենասիրությունը: Դա լավ երեւաց ՀՀ նախագահների վերջին հարցազրույցներից հետո, երբ սրանց ոհմակը հասկացավ, որ թաքնվելու տեղ չունի այլեւս: Բոլոր եւ բոլորի դիմակները պատռված են, իրենց անհայրենիք էությունը՝ ամբողջովին բացահայտված: Նախագահներին օրումեջ բանավեճի հրավիրող Նիկոլը ոչինչ չունի ասելու, ոչ մի շանս չունի այլեւս արդարանալու, իրականությունը մանիպուլացնելու, խաբելու… Դեռ երկու օր առաջ թոզուդուման էր անում… Վերջացավ, դա էլ վերջացավ: Անհայրենիք սրիկաների իր ողջ թիմին լծել է ՀՀ նախագահներին վիրավորելու, անհայրենասեր ու անհայրենիք որակելու գործին: Նպատակը Նիկոլին հայրենասեր ցույց տալն է, բայց, ինչպես վերեւում ասացինք, դա շատ ծիծաղելի է, եւ «տենց բան չկա»:

Փոխարենը կա «հայրենիք» եւ «հայրենասիրություն» հասկացություններից շատ հեռու մի խմբակ, որ եկավ, կամ որին բերեցին՝ մեր հայրենիքն ասպատակելու համար: Դույզն-ինչ հայրենասիրություն ունենային, դեռ 2020թ. սեպտեմբերի 27-ին հրաժարական կտային, ռադ կլինեին: Բայց՝ ոչ, մենք գործ ունեինք աննկարագրելի սրիկաների մի բոլուկի հետ, որ մինչ այդ արդեն նախապատրաստել էր թե՛ պատերազմը, թե՛ պարտությունը եւ թե՛ ողջ պատասխանատվությունից խուսափելու պլանը, այն է՝ ամեն ինչ բարդել երկրի նախկին ղեկավարների, ընդդիմության, զինվորականության եւ անգամ զինվորների վրա, որոնք, իբր, չեն կռվել: Հիշեք տասնյակ հազարավոր դասալիքների մասին սրանց հայտարարությունները: 2021թ. փետրվարի 25-ին ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբն ընդվզեց, Փաշինյան Նիկոլն իր ոհմակով հայտարարվեց երկրի անվտանգության սպառնալիք: Բունկերում էր տղեն այդ օրը: Կարիք չկար զինտեխնիկան Երեւանի փողոցներ հանելու: Պետք էր ընդամենը մի քանի գեներալով մտնել նրա «խուցը» եւ պահանջել, որ հրաժարական տա: Ո՞վ վիժեցրեց այդ հայրենասիրական օպերացիան: Ո՞վ ասաց, որ դա ռազմական հեղաշրջում է, որ ռազմական հեղաշրջումը վատ բան է, ո՞վ սպառնաց դատապարտել հայ բարձրաստիճան զինվորականների այդ քայլը: Մեկը Էրդողանն էր, իսկ մյուսնո՞ւրը… Մյուսները մերոնք էին՝ Լեւոն Տեր-Պետրոսյան, այդ պահի ՀՀ նախագահ Արմեն Սարգսյան… Ցանկը լրիվ չէ: Իսկ գեներալ Մոսին բան չունի՞ պատմելու այդ օրվա իրադարձությունների մասին: Հանկարծ թող չփորձի ինձ համոզել, որ Նիկոլը կարող էր հենց այդ օրը բունկերից դուրս գալ եւ Ազատության հրապարակում հավաքված ժողովրդի դեմ անհայրենիք սրիկաների երթ կազմակերպել Երեւանի փողոցներով:

Եղածը եղած է: Ամեն մեկն իր արածի ու չարածի համար պատասխան տալու է, միեւնույն է: Հարցը հիմա այլ է՝ Հայաստանն է ձեռքներիցս գնում՝ մեր հայրենիքի վերջին հողակտորը: Հայրենասերները հանկարծ սկսել են շատանալ, իսկ դա վատ նշան է: Իշխանախմբի անհայրենիք ստահակները ջանք ու եռանդ չեն խնայում՝ հայրենիքի գաղափարը մերժած Նիկոլի համար հայրենասիրության դաշտում տեղ ազատելու: Դրա լավագույն օրինակներից մեկը էլ Ռուբեն Ռուբինյանի ֆեյսբուքյան գրառումն է, որ արդեն ոչ թե ծիծաղ, այլ սրտխառնոց է առաջացնում. «2020 թվականի նոյեմբերի սկիզբն էր, օրը հստակ չեմ հիշում: Պատերազմ էր, բայց 5-րդ շարասյունն արդեն ներքաղաքական պայքարը սկսել էր: Մտա կառավարության շենք, բարձրացա վարչապետի աշխատասենյակ: Երբ որ ներս մտա, ինձ բռնացրի այն մտքի վրա, որ շենք մտնելիս որեւէ ոստիկան չեմ տեսել, իսկ շենքի ներսում տեսել եմ ՊՊԾ երկու աշխատակից ընդամենը. մեկը՝ շենքի մուտքի դռան մոտ, մյուսը՝ վարչապետի աշխատասենյակի մոտ: Վարչապետին հարցրի, թե ուր են բոլորը: Ասաց, որ ՊՊԾ-ի մեծ մասին ուղարկել է Սյունիք: Օրեր անց պատերազմին չմասնակցած հայրենասերները պիտի գրոհեին կառավարության շենքը»: Ստախոսությունն էլ պետք է սահման ունենա, այ տղա: Պատերազմի օրերին Նիկոլը եղել է միակ եւ ամենապաշտպանված օբյեկտը Հայաստանում: Դու էս ի՞նչ մուղամ ես միացրել՝ խեղճ Նիկոլը ՊՊԾ-ն ուղարկել էր Սյունիք, ինքը մենակ էր մնացել… Մեկ էլ՝ երեւի օրեր անց կառավարության շենք մտած «հայրենասերներին» չես ճանաչում, հա՞: Գյուղից մարդ կա, է, Ռուբո: Մեկը՝ Ադրբեջանի արտգործնախարարը… Հրեն՝ ձեր հայրենասերի քաջագործությունների մասին պատմելով գալիս է:

Էդիկ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan
@hraparak.am

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ՝ ՀԱՅԵՐԻ՞ ԿՈՂՄԻՑ ԵՍ, ԹԵ՞ ԹՈՒՐՔԵՐԻ

Հանրային վստահությունը կորցրած, մերժված եւ հանրային ատելության արժանացած Նիկոլ Փաշինյանն օրեցօր ավելի վտանգավոր է դառնում, հատկապես՝ իր մերձավոր շրջապատի համար: Նիկոլի սիրտը հաղթանակ է ուզում, ուզում է տեսնել, որ իրենց դեռ հաջողվում է խաբել, վախեցնել, առնել-ծախելով մարդկանցից քվե ստանալ եւ իշխանություն ձեւավորել, թեկուզ՝ քաղաքային: Նիկոլ Փաշինյանը պահանջում է, որ նոյեմբերի 16-ին կայանալիք Էջմիածին համայնքի ընտրություններում ՔՊ-ն հաղթի, այլապես սպառնում է «ցեղասպանություն» կազմակերպել. մի քանի տասնյակ պաշտոնյաների աշխատանքից ազատել, քրեական գործերով դատապարտել, ոչնչացնել՝ տարածքային կառավարման նախարարից սկսած, մարզպետով ու տարբեր պետական հիմնարկների ղեկավարներով վերջացրած: Սրանք էլ չգիտեն ինչ անել. ամենամեծ խոչընդոտը հենց Նիկոլ Փաշինյանն է, ոչ թե թեկնածուները: Ում ուզում ես փչացնել, սարքել հասարակության աչքի փուշը, բավարար է ասես, որ ՔՊ է, ՔՊ-ի թեկնածու:

Մի ժամանակ, դեռ այն ժամանակ, երբ մարդիկ չէին ճանաչում Նիկոլ Փաշինյանին կամ ճանաչում էին նրան խոսքով ու ոչ թե գործերով, Փաշինյանը թիմակիցներին ասում էր՝ ում ուզենամ, պատգամավոր կամ քաղաքապետ կսարքեմ: Հիշում եք, չէ՞, ուսապարկի պատմությունը, երբ հայտարարում էին, որ եթե անգամ Փաշինյանի ուսապարկը լիներ տվյալ անձի փոխարեն, նա էլ պատգամավոր կընտրվեր: Եվ Փաշինյանն այնքան մեծամիտ ու ինքնավստահ էր, որ հասարակությանը բացահայտ ասում էր՝ դուք այնքան հիմար եք, որ պատրաստ եք միայն իմ խոսքով ում ասես պատգամավոր ընտրել: Հիմա տարածքային կառավարման նախարար Դավիթ Խուդաթյանին հարցնում են, թե Փաշինյանը մասնակցելո՞ւ է Էջմիածնի ավագանու ընտրությունների քարոզարշավին, սա վախեցած ու խեղճացած ասում է. «Հանրապետության վարչապետն ինքն է որոշում՝ քարոզարշավին միանամ, թե՞ ոչ: Եթե նկատել եք, վերջին մի քանի ընտրությունների ժամանակ ինքը քարոզարշավին չի միացել, հետեւաբար, հստակություն չունենք, թե հանրապետության վարչապետը ոնց կորոշի»:

Ի՞նքն է որոշում, թե՞ նրան ուղղակի խնդրում են ոչ մի պարագայում չմասնակցել քարոզարշավին, որովհետեւ վիճակն առանց այն էլ ծանր է, անհուսալի: Եթե Նիկոլ Փաշինյանն էլ միանա քարոզարշավին, դրանից վիճակը կարող է ավելի ողբերգական դառնալ: Վերջին բոլոր ընտրություններում ՔՊ-ն պարտվել է: Վերջին անգամ Փաշինյանը 2023 թվականի սեպտեմբերին է մասնակցել քարոզարշավի՝ Երեւանի ավագանու ընտրությունների ժամանակ: Դրա արդյունքում ՔՊ-ն ստացավ ընտրողների ընդամենը 9 տոկոսի քվեն, ավելի քիչ, քան նույնիսկ իրենց ունեցած վարչական ռեսուրսն է, որը հիմնականում կենտրոնացած է Երեւանում: ՔՊ-ն գուցե 1-2 տոկոս ավել ստանար, եթե Փաշինյանն անձամբ չմասնակցեր քարոզարշավին, բայց չմասնակցելը եւս խայտառակություն կլիներ:

Լավ, Գյումրու կամ Էջմիածնի ընտրություններին կարող է չմասնակցել՝ ձեւ անելով, թե շատ զբաղված է Եկեղեցու դեմ պայքարով կամ կեղծ պատարագներ կազմակերպելով, իսկ խորհրդարանական ընտրությունների ժամանակ ի՞նչ է անելու, ո՞վ է գնալու քաղաքներ՝ նախընտրական հանդիպումների, կամ՝ ո՞ւմ են բերելու այդ հանդիպումներին: Ծանոթներիցս մեկը, որն Էջմիածնում մասնակցում է նախընտրական քարոզարշավին եւ արդեն հազարից ավելի տուն է մտել ու նախընտրական ծրագիր բաժանել, ասում է, որ տան դուռը բացելուց հետո երբ իմանում են, որ նախընտրական նպատակով ենք եկել, առաջին բանը, որ հարցնում են, հետեւյալն է. «Հայերի՞ կողմից եք, թե՞ թուրքերի», եւ միայն հավաստիանալով, որ «հայերի» կողմից ենք, թույլ են տալիս տուն մտնել ու խոսել: Խոսակցության հիմնական թեման էլ այն է, թե ինչպես է հնարավոր ազատվել այս թուրքերից: Ու ասում է, որ նման վիճակ է ոչ միայն Էջմիածին քաղաքում, այլեւ գյուղերում: ՔՊ-ական թեկնածու Արգիշտի Մեխակյանի հարազատ՝ Արագած գյուղում էլ է եղել ու վստահեցնում է, որ նույնիսկ այդ գյուղում ՔՊ թեկնածուն չի կարողանալու հաղթել:

Հիմա նույնիսկ Նիկոլ Փաշինյանի ուսապարկը չի կարող պատգամավոր ընտրվել, չնայած կուսակցական պատկանելություն չունի, մասնակից չի եղել ո՛չ Արցախի հանձնմանը, ո՛չ հայրենիքի կործանմանը, ո՛չ սուտ խոստումներ է տվել, ո՛չ էլ թշնամու պահանջով ուրացման գնացել: Բայց միայն այն, որ Նիկոլի ուսին է եղել, բավարար է, որ մարդիկ զզվեն ու մերժեն նրան: Նիկոլական իշխանության վախճանը շատ մոտ է, եւ Էջմիածնում կայանալիք ընտրություններն այդ վախճանի շատ կարեւոր հանգրվանն են լինելու:

Ավետիս
ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱՄՆ

ԱՅՆ, ԻՆՉ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ԱՄՆ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ ԲԵՐԵԼՈՒ ՓՈՐՁ Է

«Հրապարակի» զրուցակիցն ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի ժառանգներից **Դոնալդ Վիլսոն Բուշն** է՝ Armenian National Association ասոցիացիայի նախագահը: Նպատակը՝ միավորել Սփյուռքին, աջակցել Հայաստանի Հանրապետության տնտեսական եւ մշակութային աշխուժացմանը, Հայաստանի եւ հայերի ձայնը լսելի դարձնել ողջ աշխարհում:

- Այս օրերին կրկին Հայաստանում եք, հավանաբար, տեղյակ եք մեր երկրում տեղի ունեցող զարգացումների մասին. իշխանությունների կողմից բռնաճնշումներ, քաղաքական հետապնդումներ, կալանավորված արքեպիսկոպոսներ, քահանաներ, փաստաբաններ, քաղաքական գործիչներ եւ այլն: Պատճառն այն է, որ այս մարդիկ բարձրաձայնում են արցախահայության, ՀՀ քաղաքացիների արդարացի ձայնը, պաշտպանում նրանց իրավունքները:

- Այո, տեղյակ եմ վերջին օրերին Հայաստանում տեղի ունեցող ամեն ինչից եւ հստակ հասկանում եմ, թե ինչ է կատարվում Նիկոլ Փաշինյանի կառավարության հետ, որն այժմ ձերբակալում է Հայ առաքելական եկեղեցուն աջակցող քաղաքական հակառակորդներին: Սակայն այս ձերբակալությունները միայն արցախցի հայերի ձայները լռեցնելու եւ նրանց քաղաքացիական ազատություններից զրկելու համար չեն, ինչպես շատերն են ենթադրում: Դա շատ պարզ եւ միամիտ վերլուծություն է: Փոխարենը, Փաշինյանի կառավարության կողմից «արքեպիսկոպոսներին, քահանաներին, փաստաբաններին, քաղաքական գործիչներին եւ այլոց» ձերբակալելու փաստերը շատ ավելի լայն պատկերի մաս են կազմում, եւ այս գործունեությունը պետք է դիտարկել ավելի լայն համատեքստում՝ կապված Երեւանի եւ Վաշինգտոնի միջեւ աճող գործընկերության հետ:

- Հատկապես մտահոգիչ է Հայ եկեղեցու եւ Վեհափառի դեմ իշխանությունների արշավը, որը միջազգային հանրությունը կարծես անտեսում է, հակաեկեղեցական գործողություններն առայժմ դատապարտել են Ռուս ուղղափառ եկեղեցին եւ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը: Առաջին քրիստոնյա երկրի համար սա ամոթալի չէ՞:

- Ոչ: Ես գիտեմ, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ վարչապետի կառավարության միջեւ այս պայքարն ու բացասական գործունեությունը կարող են շատ ամոթալի թվալ հայ ժողովրդի համար: Դա պայմանավորված է նրանով, որ հայ ժողովուրդը հպարտության զգացում ունի իր պատմական մշակույթի նկատմամբ՝ լինելով քրիստոնեությունը պաշտոնապես ընդունած առաջին երկիրը: Բայց այստեղ շատ ավելին է կատարվում, որը չի կարող բացատրվել այն պարզ վերլուծությամբ, որը ես լսում եմ Instagram-ում, Telegram-ում եւ TikTok-ում: Այստեղ մենք տեսնում ենք շատ ավելի բարդ իրավիճակ, եւ դա հասկանալու համար պետք է հաշվի առնենք, թե ինչ է անում ԱՄՆ-ն ՀՀ ներքին քաղաքականության մեջ՝ Հայաստանն ավելի ուժեղ դարձնելու համար՝ որպես աշխարհում նոր ի հայտ եկող լիդեր: Արտաքուստ այս ամենը թվում է ներքին քաղաքական խնդիր, որտեղ մեկ գաղափարական խումբ փորձում է քաղաքական առավելություն ստանալ, ձերբակալելով իր հակառակորդներին՝ 2026 թ. հունիսին կայանալիք ընտրություններին նախապատրաստվելու համար: Սակայն շատ ավելի խոր մակարդակում ձերբակալությունների հետ կապված վերջին զարգացումներն իրականում վերաբերում են այն անցմանը, որը Հայաստանը կատարում է կովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի վերահսկողությունից դուրս գալու եւ այս տարածաշրջանում ԱՄՆ ազդեցությունը տարածելու ամերիկյան ռազմավարության իրականացման ուղղությամբ: Գաղտնիք չէ, որ տարիներ շարունակ, սկսած առնվազն Լեոնիդ Բրեժնեւի ռեժիմից, եւ ավելի վաղ՝ Հայ առաքելական եկեղեցու առաջնորդները տարբեր մակարդակներում եւ ժամանակներում ակտիվորեն համագործակցել են ՊԱԿ-ի եւ ԱԴԾ-ի ռուսական հետախուզական ծառայությունների հետ, հայկական ԱԱԾ-ում իրենց ունեցած անհերքելի ազդեցության եւ անձնական կապերի շնորհիվ: Եվ հիմա մենք ականատես ենք լինում Ռուս ուղղափառ եկեղեցու միջնորդությամբ Էջմիածնի եւ Մոսկվայի միջեւ հաստատված այս գաղտնի, կուլիսային եւ խորապես անձնական կապերի խզմանը: Իմ կարծիքով, Հայաստանի ներկայիս անցումը ռուսական ազդեցությունից դեպի ամերիկյան գործընկերություն դրական փոփոխություն է Հայաստանի համար, եւ դա եւս մեկ ցուցիչ է, որ Միացյալ Նահանգները դիրքավորում է Հայաստանին՝ դառնալու կովկասյան տարածաշրջանի նոր առաջնորդ: Սակայն, ի տարբերություն վերջին 200 տարիների ընթացքում Ռուսաստանի հետ Հայաստանի ունեցած ռեպրեսիվ իրավիճակի, ԱՄՆ-ի հետ Հայաստանի նոր հարաբերությունները հնարավորություն են տալիս Հայաստանին՝ տնտեսապես բարգավաճել եւ զարգանալ որպես առողջ ժողովրդավարական պետություն, որը կարող է սահմանափակել կոռուպցիան եւ արդյունավետորեն պայքարել դրա դեմ (ի վերջո՝ վերացնել): Որպես Միացյալ Նահանգների ռազմավարական գործընկեր եւ հավատարիմ դաշնակից՝ Հայաստանն այժմ դիրքավորվում է եւ շուտով հանդես կգա որպես աշխարհում նոր առաջնորդ: Սակայն, որպեսզի դա տեղի ունենա, Միացյալ Նահանգները պետք է կտրի Ռուսաստանի հետ Հայաստանի բոլոր կապերը, որոնցով գաղտնի եւ կենսականորեն կարեւոր տեղեկություններ են արտահոսում դեպի այդ երկիր: Սա է այն, ինչ մենք տեսնում ենք հիմա Փաշինյանի կառավարության եւ Էջմիածնի Սուրբ Առաքելական Եկեղեցու միջեւ պայքարում: Այս ձերբակալությունները կապված են կովկասյան տարածաշրջանի կենսական կենտրոնի՝ «Հայկական խաչմերուկ»-ում ռուսական ազդեցությունը մեկուսացնելու եւ այն ամերիկյան ծրագրով փոխարինելու հետ, որն այդքան ռազմավարական նշանակություն ունի ամերիկյան շահերի համար: Եվ ինձ համար տրամաբանական է, թե ինչու է Ռուս ուղղափառ եկեղեցին դատապարտում այս ձերբակալությունները: Իսկ Արեւմուտքում լայնորեն հայտնի է, որ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդն առաջադեմ գլոբալիստների լիբերալ եւ ձախակողմյան կազմակերպություն է, որը մեծապես ազդված է մարքսիստական ուղղափառությունից: Ես շատ ընկերներ ունեմ, որոնք մասնակցում են ԵՀԽ-ին, եւ ինձ համար զարմանալի չէ, որ նրանք կդատապարտեն Հայ եկեղեցու առաջնորդների ձերբակալությունները: Սակայն ես ՀՀ իշխանությունների եւ Հայ առաքելական եկեղեցու միջեւ վերջին քաղաքական ակտիվությունը համարում եմ դրական զարգացում արեւմտյան ժողովրդավարությանն անցնելու ճանապարհին: Վերջին 5 դարերի ընթացքում Եկեղեցու եւ պետության բաժանման քաղաքական կառուցվածքը լավ է գործել բազմաթիվ արեւմտյան երկրներում, որոնք ծնվել են բողոքական ռեֆորմացիայի արդյունքում եւ մեկ դար անց պաշտոնապես ճանաչվել են Վեստֆալյան հաշտության պայմանագրի կնքումից հետո: Հետեւաբար, Եկեղեցու եւ պետության բաժանման արեւմտյան կառուցվածքի համաձայն, այս երկու իշխանություններից յուրաքանչյուրը գործում է իր ինքնիշխանության առանձին ոլորտում, բայց արեւմտյան եկեղեցի-պետություն հարաբերությունների կարեւորագույն նրբերանգ է այն, որ բոլոր կրոնական մարմինների դատարանները, վերջին հաշվով, ենթարկվում են պետության բարձրագույն դատարաններին: Այս իմաստով, արեւմտյան ժողովրդավարություններում Եկեղեցու իշխանությունը, վերջին հաշվով, ենթարկվում է պետության իշխանությանը: Սակայն, ինչպես ցույց է տալիս հայոց պատմության ավելի մանրակրկիտ ուսումնասիրությունը, Եկեղեցու եւ պետության հարաբերությունները զարգացել են այլ կերպ աշխարհի ամենահին քրիստոնեական երկրում: Եվ սա այն է, ինչին մենք ականատես ենք լինում հենց հիմա՝ վարչապետի եւ կաթողիկոսի միջեւ… Եթե դիտարկենք այն արեւմտյան ժողովրդավարության զարգացման եւ կովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի գերիշխանությանն արագորեն փոխարինող Ամերիկայի ազդեցության ավելի լայն համատեքստում, այս վերջին ձերբակալությունները եւ կառավարության կողմից հայկական եկեղեցու պետական գործերին միջամտության դեմ պայքարը սկսում են իմաստալից դառնալ: Առանց շատ խորանալու Հայ եկեղեցու հարուստ պատմության մեջ, թույլ տվեք պարզապես անդրադառնալ հոգեւոր իշխանությունն աշխարհիկ պետական իշխանությունից առանձնացնելու վաղ շրջանի փորձերից մեկին՝ Պապ Արշակունի թագավորի (Ք.Հ. 4-րդ դար) բարեփոխումներին եւ երկու պավլիկյան ու թոնդրակյան շարժումներին (7-րդ եւ 9-11-րդ դարեր), որոնց նպատակն էր բարեփոխել Հայ եկեղեցին: Ի տարբերություն Մարտին Լյութերի գլխավորությամբ Հռոմի կաթոլիկ եկեղեցու դեմ տարած բողոքական բարեփոխման, որն աջակցում էր աշխարհիկ իշխաններին ընդդեմ Եկեղեցու, Հայ եկեղեցին բարեփոխելու այս վաղ շրջանի փորձերը ձախողվեցին… Հետեւաբար, Հայ եկեղեցու բարեփոխման այս անցյալի անհաջող փորձերի արդյունքում Առաքելական եկեղեցու առաջնորդները դարեր շարունակ անտեղի միջամտել են հայկական աշխարհիկ պետական գործերին: Ինչ վերաբերում է վարչապետի եւ Վեհափառի միջեւ առկա ներկայիս իրավիճակին, մենք այն կարող ենք համեմատել Մարտին Լյութերի եւ Հռոմի պապ Լեւոն X-ի միջեւ եղած հարաբերությունների հետ: Այն, ինչին մենք հիմա ականատես ենք լինում, Երեւանի եւ Էջմիածնի միջեւ տեղի ունեցող բոլոր ձերբակալությունների եւ բացասականության հետ մեկտեղ, Նիկոլի կառավարության կողմից ԱՄՆ օգնությամբ Հայաստան ժողովրդավարական արժեքներ եւ ինստիտուցիոնալ կառույցներ բերելու փորձ է: Արեւելքից դեպի Արեւմուտք վերջնական անցումն իրականացնելու համար Նիկոլ Փաշինյանի կառավարությունն այժմ զբաղված է Հայաստանից ռուսական ազդեցությունը հեռացնելով եւ Առաքելական եկեղեցին մաքրելով՝ դրա իշխանությունը ենթարկելով հայկական պետությանը:

- Արդյո՞ք այս ամենը տեղի չի ունենում պաշտոնական Երեւանի եւ Բաքվի համագործակցությամբ: Խաղաղության հաստատման համար Ադրբեջանը շարունակում է պահանջներ ներկայացնել Հայաստանին, չնայած վաշինգտոնյան հռչակագրին:

- Ոչ: Այն, ինչ մենք տեսնում ենք Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ, Նիկոլ Փաշինյանի գրասենյակին կամ ՀՀ Ազգային ժողովին վերաբերող հարցերում, «չի կատարվում պաշտոնական Երեւանի եւ Բաքվի թողտվությամբ»: 2018-ին Նիկոլ Փաշինյանի՝ իշխանության գալուց ի վեր, որն ունի հստակ կապեր Միացյալ Նահանգների եւ Եվրամիության հետ, այն միտքը, որ Բաքուն, Մոսկվան կամ Թուրքիան կարող են ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունենալ ՀՀ կառավարության գործերի վարման վրա, հորինված պատմություն է: Այն գաղափարը, որ Ադրբեջանը կարող է արդյունավետորեն փոխել կամ ուղղորդել գործադիր կամ օրենսդիր քաղաքականությունը Հայաստանում, Իլհամ Ալիեւի եւ նրա կառավարության որոշ տարրերի կողմից սերմանված առասպել է՝ Ադրբեջանի ընտրողների աչքում ավելի հզոր թվալու համար: Ադրբեջանը նաեւ սերմանում է այս առասպելը՝ միջազգային ասպարեզում իր՝ որպես ուժեղ տարածաշրջանային առաջնորդի կերպարը բարձրացնելու հաշվարկված ջանքերով: Անկախ նրանից, թե ինչ է հրապարակվում կամ տեղադրվում սոցիալական ցանցերում Ադրբեջանի կառավարության կողմից, ընդհակառակը, Բաքուն զրոյական ազդեցություն ունի Հայաստանի ներքին կամ արտաքին գործերի վրա:

Արա ԱԼՈՅԱՆ

Փլատակները կարող են մարդուն մխիթարել, հուսադրել, նույնիսկ՝ հիացնել

Արվեստագետ, դասախոս, գեղարվեստական քննադատ Սերգեյ Խաչատուրովը հայտնի մասնագետ է արվեստի ոլորտի մարդկանց շրջանում՝ լինեն նրանք պրոֆեսիոնալներ, թե սիրողական մակարդակով հետաքրքրված անձինք: Խոր գիտելիքներն ու բազմամյա փորձը նա արտացոլել է իր նոր՝ «Փլատակների անթոլոգիա. փլատակների թեման՝ եվրոպական մշակույթի կոնտեքստում» աշխատությունում: Գիրքը հետաքրքրաշարժ ու զգայական աշխատություն է, որը կաշառում է ընթերցողին իր խոսակցական լեզվական նրբերանգով: Պարզաբանումներն այնքան ճշգրիտ ու պարզ են, որ նույնիսկ արվեստից գաղափար չունեցողն էլ կկարողանա պատկերացում կազմել, թե «ինչն ինչոց է»: Հեղինակն իր աշխատությունը որակում է որպես «Գրառումներ եւ երեւակայության կապրիզ»: Սակայն այն նաեւ գիտահանրամատչելի դասախոսությունների ընդարձակ շարք է, որն «աշխուժացվում» է հեղինակի մեջբերած բազմաթիվ ցիտատներով: Ու այդ ամենը՝ փլատակների մասին: Խաչատուրովը մեջբերում է արվեստագիտական հոդվածներ, եւ պարզ է դառնում, որ իրականում շատ հեղինակների է հետաքրքրում փլատակների թեման: Գիրքը կառուցված է ըստ արվեստի պատմության մեջ ընդունված ժամանակագրության: Սակայն ընտրված գործերը կամ հերոսները ընթերցողին կարող են անակնկալի բերել: Շարադրանքն այնպիսին է, որ կարծես մինչեւ վերջին պահն ընթերցողը չի կռահում, թե հեղինակն իրեն ուր է առաջնորդում: Դրա շնորհիվ էլ ընթերցանությունը չի ձանձրացնում կամ հոգնեցնում: Բացի պատմական մասը ներկայացնելուց, հետաքրքիր են հատկապես ռուսական եւ խորհրդային իրականությունը ներկայացնող հատվածները, դրանցում կատարված վերլուծությունները: 280 էջանոց գրքում Խաչատուրովի ուշադրության կենտրոնում միայն նրանք են, ովքեր ձոներգել են փլատակները, հիացել, հուսավառվել կամ դրանք դարձրել ուսումնասիրության նյութ՝ որպես պատկերավորման այլաբանություն:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔՊ-Ն ՁԳՏՈՒՄ Է ՏՈՏԱԼ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵԼ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

Իրականում, դա Եկեղեցու նկատմամբ վերահսկողության, ազգային ինքնության հոգեւոր-մշակութային հիմքերի վերաձեւման ուլտրահեղափոխական ծրագիր է:

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատության, պետությունից անջատ գոյության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային ինքնության պահպանման հաստատության մասին դրույթները (տես հոդ. 17 եւ 18): Այսինքն՝ ՀԱԵ-ն ճանաչվում է հոգեւոր-մշակութային, բայց ոչ քաղաքական կառույց: Սակայն ՔՊ-ական վարչախումբն այս օրերին փորձում է քանդել պետություն-եկեղեցի սահմանադրական ներդաշնակության հիմքերը, ճգնում սահմանափակել Եկեղեցու հասարակական ազդեցությունը եւ վերահսկողության տակ առնել հոգեւոր, կրթական, արժեքային ոլորտները, որտեղ Եկեղեցին ավանդաբար ունի զգալի հեղինակություն: Որքան էլ վարչախումբը կուրծք ծեծի, թե հոգում է կուսակրոնության ուխտի պահպանման մասին, պարզից էլ պարզ է, որ կատարվում է հայկական հոգեւոր-մշակութային ժառանգությունը կասկածելի ընկալումներով փոխարինելու եւ ինքնության լծակները ՔՊ-ական կուսակցական-պետական մարմիններին հանձնելու փորձ:

Չեռնոգորիայում եկեղեցու գործերին պետական միջամտությունը ձեւակերպվեց պատմական ժառանգությունը վերահսկելու եւ գույքային իրավունքների առնչությամբ: Դա կտրուկ բեւեռացրեց չեռնոգորական հասարակությունը: Հայաստանում նույն միջամտությունն արվում է կոշտ առճակատման կանոններով եւ իշխանության կողմից փարիսեցիաբար հրամցվում է իբրեւ ազգային եկեղեցին ժողովրդին վերադարձնելու բարի մտադրություն:

Ուկրաինայում եկեղեցին ռուսական ուղեծրից հանելը ծառայեցվեց արտաքին քաղաքականության եւ ազգային ինքնության վերաձեւման գերնպատակ, եւ այն դարձավ պետական ինքնիշխանության վերականգնման խորհրդանիշ: Հայաստանում Եկեղեցին ազգային ինքնության կայուն հենքն է, եւ նրա թուլացումը չի ստեղծում նոր համախմբում, ընդհակառակը՝ առողջ մարմնի վրա բացում է արնահոսող վերքեր:

Վրաստանում Եկեղեցին՝ անկախ քաղաքական վայրիվերումներից ու իշխանության փոփոխություններից, պահպանեց իր դերը շնորհիվ այն բանի, որ պետական մակարդակով փորձ չարվեց՝ վերաձեւելու վրացական ինքնության հիմքերը: Հայաստանում, հակառակը, իշխանությունը փորձում է նոր ինքնություն ստեղծել վերեւից եւ Եկեղեցու բարոյազրկմանն ու նրա կառույցների սասանմանը միտված քայլեր է կատարում:

Մոլդովայի փորձը ցույց է տալիս, որ Եկեղեցու նկատմամբ վերահսկողություն հաստատելու իշխանության ուղեգիծը ծնում է Եկեղեցու եւ հավատացյալների դիմադրությունը, որը վերաճում է քաղաքական հակադարձության: Հայաստանում հանրային դժգոհության ալիքները դեռեւս թույլ են, դրանք խուլ տրոփում են անհատական մակարդակում, սակայն առկա են զանգվածային բողոքի վերածվելու բոլոր նախադրյալները:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՈՒ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրոպայի խորհրդի եւ ԵՄ կառույցների փաստաթղթերը կրոնական ազատությունների ոլորտում կառուցվում են պետության աշխարհիկության, եկեղեցիների ու կրոնական այլ կազմակերպությունների ինքնավարության սկզբունքների միջեւ հավասարակշռության վրա եւ հարգում են ազգային եկեղեցիների պատմական եւ ներկա դերը: ՔՊ-ական վարչախումբը հաճախ է անդրադառնում այս փաստաթղթերին՝ որպես սեփական քաղաքական քայլերի հիմնավորում: Սակայն նրանց վկայակոչումներն ընտրողական են՝ կոնտեքստից կտրված: ՔՊ-ական աճպարարությամբ եվրոպական կառույցների լեզուն Հայաստանում չի ընկալվում որպես բարեխիղճ սկզբունք, այլ ծառայեցվում է իրենց քաղաքական նպատակների օրինականացմանը:

«Հրապարակ» օրաթերթի ս.թ. հոկտեմբերի 28-ի, 30-ի, նոյեմբերի 4-ի, 6-ի, 7-ի համարներում լույս տեսած հոդվածներում ներկայացրել եմ Չեռնոգորիայում, Ուկրաինայում, Վրաստանում եւ Մոլդովայում պետություն-եկեղեցի հարաբերությունների պատմությունն ու առկա վիճակը, ուստի 1-2 նախադասությամբ համեմատենք նրանց եւ հայերիս անավարտ փորձը:

ներգործությունը ներքաղաքական կյանքում: Հակաեկեղեցական արշավն ունի նաեւ արտաքին քաղաքական բովանդակություն եւ համահունչ է Հայաստանն ու սփյուռքը միմյանցից օտարելու թուրքական վաղեմի երազանքին: Քաղաքական գործընթացների առնչությամբ տեսակետ հայտնելու իրավունքից զրկված, մարդկանց մտքերի ու վարքի վրա ազդեցությունը կորցրած, պառակտված, հեղինակազրկված, հայրենիքում հալածվող Եկեղեցուց ավելի հեշտ կլինի կտրել արտասահմանում գործող թեմերը, համազգային կառույցներն ու, առհասարակ, սփյուռքը՝ որպես գործոն: Հեղափոխական մոլուցքով կուրացած ՔՊ-ն մոտեցնում է ՀԱԵ-ին զուգահեռ կառույց՝ «իրական Հայաստանի եկեղեցի» հիմնելու պահը:

Քանդելը դյուրին է, ստեղծելը՝ դժվար: Կառավարման բոլոր ուղղություններում ձախողված ու աղետաբեր հեղափոխականները չեն կարող առաջարկել ինքնության արդիականացման ընդունելի մոդել: Նրանք ունակ են միայն ամայացնելու մեր գոյության հոգեւոր-մշակութային հենքը: Ըստ ամենայնի, նրանց նպատակը հենց այդպիսի դատարկությունն է, որն իրենք կփորձեն լցնել արտածին ու մերժելի քամիներով: Դա, ակներեւաբար, ճանապարհ է դեպի հասարակության եւ պետության երկարատեւ ապակայունացում ու կազմաքանդում:

Եկեղեցու թուլացումն ինքնաբերաբար չի ստեղծի նոր ինքնություն: Եթե ինքներս վերացնենք պատմականորեն մեզանում հաստատված հոգեւոր-մշակութային հավասարակշռությունը, ապա վերականգնման հնար այլեւս չի լինի: Մի՞թե իշխանության մեջ չեն մնացել մարդիկ, ովքեր ունակ են հասկանալու, որ հոգեւոր-մշակութային ժառանգությանն օտար է խուժանի խեւությունը:

Եկեղեցու դեմ իր գրոհը ՔՊ-ն մատուցում է որպես պայքար՝ հանուն բարձրաստիճան եկեղեցականների «բարեվարքության»:

Արա ՍԱՀԱԿՅԱՆ

ՄԻՇԻԿԻ ԿԱԴՐԵՐԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ Է՝ ԳՆՈՒՄ ՄԻՇԻԿԻ ԿԱԴՐԵՐԻ ՄՈՏ ԶՐՈՒՅՑԻ

Ազգ նախագահ Ալեն Սիմոնյանը Ֆեյսբուքի իր էջում քննադատել էր ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին, իր բնորոշմամբ՝ «Միշիկի եւ Ռոբոյի ձեռամբ ֆինանսավորվող անձերին» հարցազրույց տալու համար: Խոսքը Նարեկ Սամսոնյանի եւ Վազգեն Սաղաթելյանի «Իմնեմնիմի» հաղորդմանը Սերժ Սարգսյանի տված 7 ժամանոց հարցազրույցի մասին է, որը բուռն արձագանք առաջացրեց ՔՊ-ում. ՔՊ առաջնորդը մեկ տասնյակից ավելի ստատուսներ գրեց, բոլոր ՔՊ-ականները, այդ թվում՝ Ալեն Սիմոնյանը, հերթով անդրադարձան եւ հատկապես թիրախավորեցին հարցազրույցը վարողներին՝ նրանց անվանելով «Միշիկի կադրեր, Միշիկից ֆինանսավորվողներ»:

Սակայն պարզվեց, որ ինքը՝ Սիմոնյանն էլ առանձնապես չի խորշում Միքայել Մինասյանի հետ ասոցացվող անձանցից եւ որոշել է հարցազրույց տալ «Արմքոմեդիին»: Հիշեցնենք, որ Սերգեյ Սարգսյանը եւ Նարեկ Մարգարյանն իրենց կենսագրությունը սկսել են Սերժ Սարգսյանի իշխանության տարիներին եւ աշխատել են նրա փեսայի հետ առնչություն ունեցող TV-ներում, մասնավորապես՝ «Արմնյուզ» հեռուստաընկերությունում: Այնպես որ, նրանք ավելի շատ են «Միշիկի կադր», քան Վազգեն Սաղաթելյանն ու Նարեկ Սամսոնյանը: Մենք Նարեկ Մարգարյանից հետաքրքրվեցինք՝ իրո՞ք Ալեն Սիմոնյանն առաջիկայում իրենց հյուրն է լինելու, եւ ի՞նչ հարցեր են քննարկելու նրա հետ: Պարզվեց, որ Ալեն Սիմոնյանն արդեն նկարահանվել է Սերգեյ Սարգսյանի եւ Նարեկ Մարգարյանի հեղինակած «Լուրջ քասթ» հաղորդման շրջանակներում. «Տենց երեւի թեմա չմնաց, որ չխոսենք: Նկարահանումը քիչ առաջ վերջացավ, կիրակի կլինի եթերում»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊԵՏՔ Է ՆԻԳԵՐԻԱՅԻ ՔՐԻՍՏՈՆՅԱ՞Ղ ԼԻՆԵՆՔ, ՈՐ ԹՐԱՄՓԻՆ ՄՏԱՀՈԳԻ ՄԵՐ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Օրեր առաջ ԱՄՆ նախագահը TruthSocial սոցիալական ցանցում գրել էր, թե մտադիր է պատերազմ հայտարարել Նիգերիային՝ քրիստոնյաների դեմ ատելության, սպանդի, խոշտանգումների, հալածանքների պատճառով, որպեսզի «իսլամիստ ահաբեկիչներին լիովին ոչնչացնեն», եւ անգամ Պենտագոնին հրամայել էր պատրաստվել դրան, եթե Արեւմտյան Աֆրիկայի այդ երկիրը չկանխի քրիստոնյաների սպանությունները: Նիգերիայից վստահեցրին, որ պատրաստ են այդ հարցերը քննարկել Թրամփի վարչակազմի հետ՝ պնդելով, թե ահաբեկիչների թիրախում միայն քրիստոնյաները չեն:

Խաղաղության ջատագով եւ քրիստոնյաների պաշտպան Թրամփը Նիկոլ Փաշինյանի հետ Վաշինգտոնում օգոստոսյան հայտնի հանդիպման ժամանակ հայտարարել էր, որ կխնդրի Ադրբեջանին՝ ազատ արձակել Բաքվում պահվող 23 քրիստոնյա հայերին. «Կարծում եմ՝ նրանք կանեն դա ինձ համար: Դա կարեւոր է»: Ռուբեն Վարդանյանի պաշտպան Զարեդ Գենսերն էլ շտապեց արձագանքել, որ դա «մեծ քայլ է իմ հաճախորդի՝ Արցախի նախկին պետնախարար եւ Ադրբեջանի 10 քաղաքական բանտարկյալներից եւ ռազմագերիներից մեկի՝ Ռուբեն Վարդանյանի ազատ արձակման ուղղությամբ»: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ այդ 23 քրիստոնյաների ցանկում չկան Բակո Սահակյանն ու Արցախի մյուս գործիչները: Պարզ է, որ Փաշինյանը բանակցությունների ժամանակ չի բարձրացնում Բակո Սահակյանի, Արկադի Ղուկասյանի, Ռուբեն Վարդանյանի եւ այլ գերիների հարցը: 23 հոգու ցուցակը կազմվել է մասնավոր ամերիկացու նախաձեռնությամբ, Փաշինյանի համար ընդհանրապես անսպասելի էր այս ցուցակի մասին հիշատակումը. Նրա ժեստերը եւ արձագանքը դրա վառ ապացույցն էին:

Այս թեման կրկին բարձրացավ անցած շաբաթ, երբ ՀՀ 3-րդ նախագահ Սերժ Սարգսյանը 7 ժամանոց հարցազրույցի ժամանակ հայտարարեց, որ Բաքվի բանտում գտնվող Արցախի ղեկավարներն այլ ելք չունեին՝ կամ պետք է փախչեին, գային Հայաստան՝ դրանով իսկ վարկաբեկելով իրենց, կամ գնային ինքնազոհողության, նրանք ընտրեցին երկրորդ ճանապարհը՝ սպասելով այնքան, մինչեւ մարդկանց ճնշող մեծամասնությունն անցավ անցակետով. «Կար տարբերակ, որ նրանց էլ օդային ճանապարհով էվակուացնեին, ինչպես դա արեցին արդեն գործող նախագահ Սամվել Շահրամանյանին եւ մի քանի հոգու: Ես մեծ կասկած ունեմ, որ այդ ցուցակում ընդգրկվել են մարդիկ՝ ոչ առանց Հայաստանի միջամտության, քանի որ ինձ համար շատ տարօրինակ է, թե ինչու, օրինակ, ադրբեջանցիները պիտի թողնեին գործող ՊԲ հրամանատարին սահմանն անցնել ու հասնել Հայաստան, իսկ պաշտպանության նախարարին, որն արդեն երկու տարի է՝ թողել էր պաշտոնը, գերեվարեին»: Սարգսյանի խոսքով՝ այդ ցուցակի մասին տեղյակ է եղել նաեւ Սամվել Շահրամանյանը, եւ կգա ժամանակը՝ նա այդ մասին կխոսի:

Ինչ է, Սպիտակ տանը չե՞ն նկատում ՀՀ իշխանությունների կողմից Մայր Աթոռի, նրանց սատարողների եւ, ընդհանրապես՝ առաջին քրիստոնյա ազգի հավատքի, հոգեւոր զգացմունքների դեմ տարվող այս արշավը, չգիտե՞ն, որ Բաքվի բանտում հայ գործիչներ կան, որոնց մեղքն իրենց երկրի կառավարման ղեկին կանգնած լինելն է ու իրենց հայրենիքը պաշտպանելը: Իսկ օրերս պարզվեց նաեւ, որ հենց Փաշինյանի ներկայությամբ ԱՄՆ նախագահը, ինչպես խոստովանել է նրա հատուկ ներկայացուցիչ Սթիվեն Ուիտկոֆը, սադրող հարց է ուղղել Բաքվի բռնապետին. «Ինչո՞ւ կանգ առաք 2020-ին, երբ հզոր բանակ ունեք»: Ալիեւն էլ, իբր, պատասխանել է. «Կանգ ենք առել, քանի որ հասել ենք իրենց ուզածին՝ հողերի ազատագրմանը»: Եվ այս ամենը ներկայացվում է այնպիսի վերամբարձությամբ, կարծես մարդասպան ու հայատյաց Ալիեւը «դարակազմիկ լավություն» է արել հայ ժողովրդին եւ Հայաստանին՝ Արցախը զավթելով եւ էթնիկ զտում անելով:

Իսկ Բաքվի ռազմական դատարանում շարունակվում է Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների շինծու դատավարությունը, այսինքն՝ ալիեւյան ռեժիմի հակահայ, հակաքրիստոնեական արշավը մոտենում է իրենց իսկ ուրվագծած ու նախապես որոշված սցենարի վերջին արարին: Նոյեմբերի 8-ին էլ Ալիեւը Բաքվի ռազմական շքերթում հայտարարեց. «Հայաստանը չկարողացավ ճիշտ եզրակացություններ անել եւ ղարաբաղյան երկրորդ պատերազմի նախօրեին ավելի ագրեսիվ դարձավ: Նրանք (հայերը) մեզ սպառնացին նոր պատերազմով: Նրանք ասացին, որ նոր պատերազմ կսկսեն՝ նոր տարածքների համար, եւ ամբողջությամբ կգրավեն Ադրբեջանը: Նրանք պնդում էին, որ իրենց տանկերը կկայանեն Բաքվի փողոցներում: Նրանք ասացին, որ թեյ կխմեն Բաքվում: Ըստ էության, նրանց երազանքն իրականացավ: Մենք այն իրականացրինք: Նրանց տանկերն այսօր ցուցադրվում են Պատերազմի ռազմավարի այգում: Հայ ռազմական հանցագործները (նկատի ունի ապօրինի գերեվարված եւ կալանքի տակ գտնվող Արցախի ռազմաքաղաքական ղեկավարներին եւ մյուս հայ գերիներին) այժմ դատվում են Բաքվում եւ ադրբեջանական թեյ են խմում քննչական մեկուսարանում»:

Հայաստանում էլ տեսնում ենք ՀՀ իշխանությունների նույնական հակահայ, հակաքրիստոնեական արշավը Մայր Աթոռի, Վեհափառի, սրբազանների, հոգեւոր հայրերի, նրանց աջակցող ազգային բարերարների եւ մյուս ազգային ուժերի դեմ: Եթե Նիկոլի դեպքում մոտիվները պարզ են՝ վերարտադրվելու անհագուրդ ցանկություն, պոտենցիալ մրցակիցների մեկուսացում հայկական ու ադրբեջանական բանտերում, ապա Թրամփի դեպքում հարց ենք ուզում ուղղել. «Պարոն նախագահ, մոռացե՞լ եք հայ քրիստոնյաների, Ձեր նշած 23 քրիստոնյայի եւ Փաշինյանին ուղղված Ձեր խնդրանք-հորդորի մասին, թե՞ միայն արյունահեղությունը կստիպի Ձեզ՝ հիշել Երեւանի եւ Բաքվի բանտերում խոշտանգվող, հալածվող հայ քրիստոնյաների մասին… մի՞թե պետք է նիգերիացի քրիստոնյա լինենք, որ Ձեզ մտահոգի մեր ճակատագիրը»:

Արա ԱԼՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 11.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՏՐԻԳՆԵՐ ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԷՇԵԼՈՆՆԵՐՈՒՄ. ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՍԵՐԳԵՅ ԼԱՎՐՈՎՆ Է

Ռուսական որոշ ԶԼՄ-ների հրապարակումների համաձայն, երկրի քաղաքական բարձր էշելոններում հերթական ինտրիգն է հասունանում: Մասնավորապես ասվում է, որ ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոյի հետ ունեցած վերջին հեռախոսազրույցից հետո, որը կարելի է համարել ձախողված, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը որոշել է ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչության 76-ամյա ղեկավարին ուղարկել «լուսանցք»: Այս մասին գրում է ռուսական ТМТ պարբերականը:

Հիշեցնենք, որ այդ ձախողված հեռախոսազրույցն էլ նշանավորեց Պուտին-Թրամփ՝ Բուդապեշտում կայանալիք հավանական հանդիպման խափանումը: Սերգեյ Լավրովը ռուսական քաղաքական վերին էշելոնների հնաբնակներից է: Ռուսական արտաքին քաղաքական գերատեսչությունը ղեկավարում է արդեն երկու տասնամյակ: Նման խոսակցությունների առիթ տվել է այն, որ Լավրովը ՌԴ Անվտանգության խորհրդի նոյեմբերի 5-ի նիստում, որը ոչ պակաս նշանային կարելի է համարել, ներկա չէր: Այստեղ նկատենք, որ Լավրովն ի պաշտոնե հանդիսանում է Անվտանգության խորհրդի անդամ: Իսկ այդ նշանային նիստում էլ ՌԴ նախագահը հանձնարարել է վերականգնել միջուկային փորձարկումները, որոնք վերջին անգամ Ռուսաստանն իրականացրել է 1990 թվականին:

Ռուսական «Коммерсант»-ը գրում է, որ Լավրովի բացակայությունը «համաձայնեցված է եղել»: Փորձագետների ուշադրությունից չի վրիպել հատկապես այն, որ Լավրովն Ախ մշտական անդամներից միակն է եղել, որ չի մասնակցել նոյեմբերի 5-ի այդ հիշարժան նիստին: Փորձագետների ուշադրությունից մեկ այլ նյուանս էլ չի վրիպել: «Մեծ քսանյակի» այս տարվա գագաթնաժողովին ռուսական պատվիրակությունը կղեկավարի ոչ թե Սերգեյ Լավրովը, այլ՝ ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Մաքսիմ Օրեշկինը: Այս մասին էլ հայտարարել է Կրեմլի խոսնակ Դմիտրի Պեսկովը: Ընդ որում, Պեսկովը մանրամասնել է, որ այդ որոշումը կայացրել է անձամբ Պուտինը: Պուտինն այս տարի էլ չի մասնակցի «Մեծ քսանյակի» գագաթնաժողովին: Այն տեղի է ունենալու Հարավաֆրիկյան Հանրապետությունում: ՀԱՀ-ը ստորագրել է Հռոմի կանոնադրությունը (ստատուտը) եւ որպես Միջազգային քրեական դատարանի անդամ երկիր՝ պարտավոր է ձերբակալել ՌԴ նախագահին, եթե նա մուտք գործի իր տարածք, քանի որ ՄՔԴ-ն Պուտինի համար ձերբակալման սանկցիա է տվել: Եզրակացություններ անելը, իհարկե, վաղ է, կապված այն բանի հետ, թե արդյոք Լավրովն առաջիկայում կգնա՞ թոշակի: Նաեւ դժվար է ասել, թե առաջիկայում նրա գլխին կուտակված ամպերը երբ կցրվեն: Սակայն ամեն դեպքում փաստ է, որ նրան առնվազն «տուգանային» են ուղարկել ձախողված հեռախոսազրույցից հետո:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am